№ 150 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 13

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒԼԻՍԻ 13 № 150

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի. առանձին համարները ամեն տեղ 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆոն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՈՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ յուլիսի 1-ից մինչև 1 հոկտեմբերի 2 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը յայտարարում է, որ գործի ընդունված ինտելիգենտ գործազուրկները պէտք է ներկայանան առաւօտեան ժամը 9-ին վկայականներով, իւրաքանչիւրը իր քաղաքամասում հետևեալ քաղաքային շինութիւնների մէջ.

I քաղաքամաս
Իզմայլովսկի և Կիրօչնի փողոցների անկիւն, քաղաքային ուսումնարան։

II քաղաքամաս
Դավիդովսկի հրապարակ, տուն Գամրեկելի։

III քաղաքամաս
Պուշկինսկի գրադարան։

IV քաղաքամաս
Քաղաքային վարչութիւն։

V քաղաքամաս
Արհեստական ուսումնարան, Էկզարխսկի հրապարակ։

VI քաղաքամաս
Խարփուխի ուսումնարան, Արբուզնի հրապարակի վերև։

VII քաղաքամաս
Քաղաքային ուսումնարան, ա. Մելիքովի «Պրովիանտսկի» մագազինից ոչ հեռու։

VIII քաղաքամաս
Զուղուրեթի քաղաքային ուսումնարան, Պանասկովսկի փողոցի վրա, ոստիկանատան դիմաց։

IX քաղաքամաս
Քաղաքային ուսումնարան, Ալաճալեան փող. № 72։

X քաղաքամաս
Դիդուբէ, Սագուրամսկի փող., անկիւնից 2-րդ տուն, քաղաքային ուսումնարան։

(առ.) 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր նկատողութիւնները. Վերջին տեղեկութիւններ. Տեղեկատու Զանգեզուրի. Հողային խնդիրներ. Մտքեր և փաստեր. Մայրաքաղաքի կեանքից. Ձեռքը ձեռքին լուանում է. Մի բացատրութիւն հայ-կաթօլիկ հասարակութեան. «Ալիքի» Մանեւրները. Դիլիջանը իբրև ամարանոց. Նամակ Բաթումից. Նամակներ խմբագրութեան. Վերջին հեռագիր. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պարսկաստանի ներկայ դրութիւնը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՄԵՐ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

VI

Գանք խնդրագրի այն կէտին, որը 14 միաբանների կարծիքով կազմում է կաթողիկոսական կոնդակի ամենահիմնական և կարևոր թերութիւնը։

Դա այն է, որ կոնդակը չէ յատկացնում կենտրոնական ժողովում որոշ տեղ բացառապէս հոգևորականների համար և ժողովրդին է թողնում հոգևորականներին ընտրել-չընտրելը։

Դա մի հարց է, որի մասին կարելի է երկար վիճաբանել, թեր ու դէմ կարծիքներ յայտնել, հասարակական կարծիքի համար որոշ տրամադրութիւն ստեղծել, բայց նրա վերաբերութեամբ որոշումներ կարող է կայացնել միայն կենտրոնական ժողովը, որը և կը զբաղվի այդ հարցով։ Մեր ուրոյն կարծիքները և հայեացքները, մեր յայտնած խորհրդածութիւնները և առաջ բերած պատմական ու ներկայ կեանքի ցուցումները կը ծառայեն իբրև նիւթ կենտրոնական ժողովի համար։

14 միաբանները, յամենայն դէպս, ներկայացրել էին իրանց խնդրագիրը ոչ թէ կենտրոնական ժողովի համար նիւթ պատրաստելու նպատակով, այլ որպէս զի այժմէն իսկ որոշեն կենտրոնական ժողովի կազմը և մտցնեն հոգևորականների որոշ թիւ։

VII

Անկասկած կենտրոնական ժողովը ուշադրութեան կառնէ բոլոր խնդիրները և կը տայ հոգևորականութեանը այն տեղը, որ նա ըստ էութեան պէտք է վայելէ կրօնական գործերի քննութեան և կարգադրութեան ժամանակ։

Կարապետ վարդապետը օրինակ է բերում պատարագի կրճատման մասին լսած լուրը։ Կարելի էր անշուշտ շարել բազմաթիւ այդպիսի հարցեր։

Մի՞թէ անհրաժեշտութիւն կայ յայտնելու, որ այդպիսի հարցերի գլխաւոր հեղինակութիւնը վերապահված կը լինի հոգևորականութեան։ Մի՞թէ կարիք կայ ասելու, որ կան խնդիրներ, որոնց համար պէտք է գումարվեն թէ զուտ կրօնական, թէ խառն ժողովներ։

Կենտրոնական ժողովի գլխաւոր իմաստը այն բանի մէջն է, որ ազգը իր ընտրեալներով ղեկավարէ այն բոլոր գոր- [illegible] կարալական պարբեր և ըստ էութեան կը լինէին ժողովրդի ձեռքին, եթէ թոյլ տրուած լինէին պատմական և քաղաքական հանգամանքները։

VIII

Իրանց խնդրագրի մէջ 14 հոգևորականները կենտրոնական ժողովի արգիւնքների մասին պատմում են ի միջի այլոց հետևեալը։

> Հայ հոգևորականութեան ամբողջ դասը իրաւազրկութեան ու սարկական խոնարհութեան ծայր աստիճանին պէտք է հասնի, և այնուհետև մի անպէտք ու անպատիւ հայը կը յօժարի աշխարհը թողնել և անգամ գրուել մի այսպիսի արհամարհուած դասակարգի։
>
> Այլ ևս Քրիստոսին ծառայելու ինչ հնարաւորութիւն այնպիսի վիճակի մէջ, որտեղ տէր ու հրամայող մարդիկ են միայն և կեանքի ու պաշտօնավարութեան բոլոր պայմանները կախուած են աշխարհական մարդոց հաճոյքից։

Այս և սրանց նման տողերով 14 հոգևորականները կամենում են ցոյց տալ, թէ կենտրոնական ժողովներով պէտք է հաստատվեն ոչ թէ ժողովրդական ոգու համապատասխան կարգեր, այլ միայն բռնութիւն ու զրկանքներ, և թէ ազգի ներկայացուցիչները պէտք է ժողովվեն ոչ թէ որոշումներ կայացնելու, այլ հաճոյքներ արտայայտելու համար։

Հաճոյքներ։

Մի՞թէ յետ չէք վերցնիլ այսպիսի ձևակերպութիւնները։

IX

Կարապետ վարդապետը նոյնպէս յիշատակում է, որ կենտրոնական ժողովը շօշափում է ի սփիւռս աշխարհի ցրված հայերի իրաւունքները կամ շահերը։

Այդ առարկութեան մասին մենք խօսեցինք, երբ մենք պատասխանում էինք Մատթէոս վարդապետին։

Ուստի նորից չենք կրկնի։

Կարապետ վարդապետը գանգատվում է, որ հոգևորականներից շատերը երկար տարիներ անձնուէր աշխատելուց յետոյ մնում են չը գնահատված, այլ և զրպարտված։

Սակայն դա ընդհանուր գանգատ է և անմիջապէս չէ վերաբերում քննվող խնդրին։

Մի՞թէ հայ հրապարակախօսը, վիպասանը, ուսուցիչը, դերասանը, նկարիչը և հասարակական գործողներից շատերը նոյն վիճակի մէջ չեն եղել և չեն ներկայումս։

Դա ցաւալի երևոյթ է և պէտք է դառնայ հասարակական քննութեան առարկայ, բայց այսօր նա չէ մեզ հետաքրքրողը։

X

Մենք կանգ չենք առնում Կարապետ վարդապետի առաջ բերած մի քանի ուրիշ կէտերի վրա, որոնք երկրորդական նշանակութիւն ունենին։ Եւ առանց ուշադրութեան չենք թողնում այն հանգամանքը, որ խնդրագիրը ստորագրողների մեծագոյն մասը նոր խնդրագրով դիմել է Վեհափառ Կաթողիկոսին և յայտնում է, որ նա կենտրոնական ժողովի դէմ ոչ մի առարկութիւն չունի և միայն խնդրում է թոյլ տալ մի քանի ընտրված հոգևորականների՝ լինելու ժողովի անդամներ։

Խնդրագիրը, որ կազմել են կամ աւելի ճիշտ ասած ստորագրել են 14 հոգևորականները, այն չէ ասում մեզ, քան ինչ որ մեկնաբանում են մեր առաջ Կարապետ վարդապետը և ուրիշները։

Անշուշտ միւս անգամ խնդրագիր կազմողները, որոնք մեղադրում են և մասամբ իրաւացի են մեղադրում կոնդակներ հրատարակողներին հապճեպութեան մէջ, իրանք կաշխատեն աւելի լուրջ վերաբերվել և նոյնպէս հապճեպ բողոք-խնդրագիր չը խմբագրել։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուշի, 12 յուլիսի 1 ժամ 40 րոպէ

Այսօր առաւօտ գեներալ Գոլօշչապօվի տան մօտակայքում մի հայ սպանվեց թուրքերի ձեռքով։

Գոլօշչապօվը ցանկացաւ իսկոյն պարզել եղելութիւնը և յայտնագործել ոճրագործներին։ Նա ուղարկեց կօզակների մի վաշտ դէպի Թուրքաց թաղը հարց ու փորձ անելու և յանցաւորներին պահանջելու։

Թուրքերը հանդիպեցին կօզակներին հրացանաձգութեամբ։ Կօզակները պատասխանեցին համազարկերով։

Տեսնելով, որ թուրքերը չեն դադարեցնում հրացանաձգութիւնը, գեներալ Գոլօշչապօվը հրամայեց թնդանօթ ուղղել դէպի Թուրքաց թաղը և ռմբակոծել։

Ռմբակոծութիւնը թնդացնում է օդը և սոսկալի տպաւորութիւն է թողնում։

Շուշի, 12 յուլիսի

Թուրքերի ներկայացուցիչները յատուկ մի հեռագիր են ուղարկել Փոխարքային, գանգատվելով գեներալ Գոլօշչապօվի վրա, որը նրանց կարծիքով չէ կարող նպաստել խաղաղութեան վերահաստատման՝ նրա ղեկավարութեան տակ գտնվող չորս գաւառներում։ Թուրքերը չեն հաւանում Գոլօշչապօվի կարգադրութիւնները։

Շուշուց, յուլիսի 12-ին, ցերեկվայ ժամը 11 և 15 րոպէին հեռագրում են Աշոտ եպիսկոպոսին և Գարեգին արքեպիսկոպոսին.

«Քաղաքում սկսվեց հրաձգութիւն»։

Ներսէս վարդապետ

Երևան, 12 յուլիսի

Այսօր առաւօտեան, մօտ ժամի 11-ին, ընդհանուր խաղաղութեան մէջ յանկարծ սկսվեց հրացանաձգութիւն, որը տևեց շատ կարճ միջոց։

Իսկոյն վրա հասան զօրքերը։ Պարզվեց, որ ընդհարում է տեղի ունեցել հայերի և թուրքերի մէջ։

Սպանված է մի թուրք, վիրաւորված են 2 թուրք և 2 հայ։

Փողոցի կեանքը վերանորոգվեց։

Ընդհարումի պատճառը դեռ պարզ չէ։

Սուրմալուի հայերը ուղարկել են Երևանեան նահանգի կողմից ընտրված Պետական Դումայի անդամներ Տէր-Պետրոսեանցին և Ադայեվ Երիվանսկուն հետևեալ հեռագիրը.

«Սուրմալուի մուսուլմանների ուղարկած գանգատը գաւառապետ Իօնինի դէմ բոլորովին սուտ է. հայերը ոչ մի օգնութիւն չեն ստացել որևէ մէկի կողմից, ոչ մի միջոց չէ խնայվել կանգնեցնելու թուրքերի գործած գազանութիւնները հայերի վրայ։ Մուսուլմանների ուղարկած գանգատը Դումային նպատակ ունի նսեմացնել իրանց գործած աննկարագրելի ոճիրների նշանակութիւնը, որպէս զի իրանք անպատիժ մնան։ Հայերը ծարաւի են հանգստութեան և խնդրում են Դումայի աջակցութիւնը։ Մանրամասնութիւնները նամակով»։

Սուրմալուի հայերի ներկայացուցիչներ՝
Սուսաննեանց և Խօջաէկյանթեանց

Նոր-Բայազէտ, յուլիսի 8-ին

Յուլիսի 4-ի գիշերը տեղի ունեցաւ մի յարձակում մեր գաւառի Քեօլանի-Ղզան գիւղի խաշնարածների վրա հարևան թուրք եայլաղաւորների կողմից, որոնք Գանձակի կողմերից (մուրթուլեցիք, այսասցիք և այլն) գալիս են մեր սահմանակից լեռնադաշտերում ամառը անցկացնելու համար։ Թուրք խուժանը, յարձակվելով չոբանների վրա, փախցրեց նրանց և քշեց քեօլա-ղանցի Գրիգորի 225 հատ ոչխարի սուրուն։ Չոբաններից մի քուրդ հաւար բերելով գիւղը, գնում են օգնութեան Գրիգորը և այլ գիւղացիներ՝ մի քիչ ուշ Գրիգորից, որին թուրքերը գերում են ոչխարի հետ միասին։ Հաւարի գնացած մարդիկ կռուելով թուրք աւազակների հետ չեն յաջողում ոչխարի սուրուն յետ խլել, ուստի կռւի միջոցին վիրաւորվում են 3 հոգի հայերից և 2-ը անյայտանում։ Թուրքերի կորուստը անյայտ է մնում։

Աւելի ցաւալին այն է, սակայն, որ նոյն թուրքերը, որոնք աւազակային արհեստը ծայրայեղութեան են հասցրել, անցեալ տարի նոյնպէս նոյն տեղից, նոյն գիւղից և շրջականերից քշեցին ահագին քանակութեամբ տաւար, ոչխար և այլ անասուններ թէ Նոր-բայազէտցիներից և թէ գիւղացիներից, որոնք (Տէր-Միքայէլեանց, Նալբանդեանց, Համբարձումեանց և այլն) մինչև օրս, ինչպէս ասում են, վիզը ծուռ մնացել են, սպասելով որ ադմինիստրացիան նրանց բաւարարութիւն կը տայ, քանի որ նրանց յոյսերով են կերակրել միայն մի ամբողջ տարի։ Բայց ցաւալի է, որ տուժող անասնատէրերը «աչքները ջուր կարած» սպասում են զուր յոյսերով և ոչինչ չը ստանալով...

Յիշենք և այն, որ վերոյիշեալ թուրք աւազակները բացի հայերից քշած ոչխարներից, ասում են, երբ թէ քշել տարել են նաև Ղզլանքցի թուրքի մի սուրու, կարծելով որ այդ սուրուի մէջ կան նաև հայերի ոչխարներ։ Սակայն ոչխարատէրը հաւատացնելով աւազակներին թէ չը կան իր սուրուի մէջ հայի ոչխարներ, յոյս կայ, որ թուրքի ոչխարները վերադարձնեն։

Ինչպէս լսում ենք, գաւառիս շատ գիւղերից տեղական բնակիչները, վախ ունենալով սրտում, հայ-թուրքական յարաբերութիւնների շնորհիւ, եայլաղ դուրս չեն եկել այդ տարի և իրանց կթաններով հանդերձ մնում են գիւղերի մէջ, որտեղ պէտք է առաջ տանեն իրանց կաթնատնտեսութիւնը, որը այն արգիւնքը և այն զարգացումը չունի, ինչ որ եայլաղներում, պաղ օդի մէջ, սարերի կատարներին։

Գ. Սիմոնեանց

Դերբենդ, յուլիսի 8-ին

«Սև հարիւրեակի» եռանդուն անդամները վերջին ժամանակները մեր քաղաքումն էլ սկսեցին իրանց աւերիչ գործունէութիւնը։ Կարծիք չկայ, որ, կազմած ծրագիրը ի կատար ածելու համար, ստիպված են ամեն միջոցի դիմելու, միայն թէ մարդիկ սպանեն լոկ թալանելու ու կողոպտելու նպատակով։ Չկարծէք թէ այդ սպանութիւնները կատարվում են ամենախուլ փողոցներում, կամ թէ քաղաքից դուրս. ո՛չ, այդ բոլորը կատարվում է ամենայայտնի փողոցներում, ոստիկանութեան աչքի առաջ, և համարեա թէ օրը ցերեկով։ XX դարի այդ անգութ մարդասպանները, որոնք գործում են յանուն իրանց գրպանի, գործ չեն ածում սուր, հրացան կամ ատրճանակ, այլ մահացու հարուածում են երկաթէ գործիքներով, օրինակ՝ մուրճ, երկաթէ հաստ ցողեր և այլ նման գործիքներ։ Մի ամիս սրանից առաջ զոհ գնացին երկու հայ վաճառական տղերք, որոնց գլուխները երկաթի հարուածով ջախջախում են չարագործները ու թալանում ամեն ինչ։ Բայց ոստիկանութիւնը մինչև օրս էլ փնտռում է չարագործներին։ Նոյնանման օրինակ կրկնվեց և ամսիս 7-ի ժամը 10-ին երեկոյեան վաճառական Գ. Աղասեանցի հետ, որը փակելով իր խանութը տուն էր վերադառնում։ Հազիւ թէ խեղճ մարդը հասնում է Բարեատինսկայա փողոցի վրա գտնված քաղաքային 4-դասեան դպրոցին, երբ անյայտ չարագործները, 4 հոգուց բաղկացած, շրջապատում են նրան, որոնցից մէկը սկսում է ձեռքում ունեցած հաստ երկաթով հարուածներ հասցնել Աղասեանցի գլխին. Հէնց առաջին հարուածից անմեղ զոհը գետին է փռվում. հասցնում են երկրորդ հարուածը, բայց և այնպէս սրիկաներին չէ յաջողվում սպանել, որովհետև Աղասեանցի գոռում-գոչումի վրա օգնութեան են հասնում ոչ հեռու կանգնած կառապանները. իսկ չարագործները, չը հասնելով նպատակին, թողնում են ու փախչում։ Պէտք է ասած, որ արիւնշաղախ դարձած Աղասեանցին հասցնում են տուն լեզուն կտրված, որը մինչև առաւօտ չէր խօսում։ Երբ առաւօտը սկսեց խօսել, ասեց, թէ ճանաչում է խփողներից մէկին։ Իսկ ինչ վերաբերում է մեր քաղաքի կարգապահներին, միայն այսքանը կասեմ, որ միշտ նրանք բացակայում են։ Բախտաւոր ենք դերբենդցիներս, որ ունենք այսպիսի եռանդուն ոստիկանութիւն։

Դարդիման

Էջմիածնից Տաճատ վարդապետը հեռագրում է յուլիսի 12-ին.

«Ոչ թէ ես անձամբ, այլ Նորին Վեհափառութեան ինքնաստորագիր գրաւոր կարգադրութեան համաձայն յայտնել եմ, որ 14 միաբանների ժողովի նպատակի մասին յայտնի չէր Նորին Վեհափառութեան. Կարապետ վարդապետը պնդում է հակառակը, հիմնվելով երրորդ անձանց ասածի վրա. ինձ չէ պատկանում վճռել՝ ով է այդտեղ սուտ խօսում—Կարապետը թէ գործի մէջ խառն եպիսկոպոսները. ես այդտեղ ոչ մի գործ չունեմ»։

Գանձակում ամսիս 9-ին Ս. Յովհաննէս եկեղեցու ծխականների կողմից ընտրվեցին պատուիրակներ՝ Ս.մ. Բալագեան, Աբր. Դիլխանդարեան, Աբ. Թէմուրեան, Ա. Սերեբրակեան, բժ. Գեր. Մելիք-Բեգլարեան և Բ. Ստեփանեան։ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ ընտրվեցին՝ Կորիւն վարդապետ, Վ. Ազիբեգեան, Ա. Մալեան, Իսահակ Խօջաեան և Արամ Տէր-Յովսէփեան։ Ընտրութեանը գիւղերում շատ տեղեր մասնակցել է նաև իգական սեռը։ Քաղաքիս ընտրութեան ժամանակ մասնակցող կանանց թիւն աննշան էր։

Ա. Սահակեան

Բանանց, յուլիսի 10-ին

Համաձայն առաջնորդական փոխանորդի շրջաբերականին, կիրակի ամսիս 9-ին մեր գիւղում կատարվել է գիւղական երեք պատուիրակների ընտրութիւնը, որոնք պէտք է ամսիս 15-ին մասնակցեն Գանձակում կայանալիք պատգամաւորական ընտրութեան ժողովին։ Ընտրվեցին հետևեալ անձինք՝ Ստեփան Տէր-Աւետիքեան, Արշակ Տէր-Մովսէսեան և Աւետիք Սահակեան։

«Courrier de Sophja» լրագրին, հայոց Օրմանեան պատրիարքի հրաժարականի առիթով, Պոլսից գրում են, որ պատրիարքի պատճառաբանված հրաժարականը թէև սուլթանը չէր ընդունել, բայց և այնպէս պատրիարքը կտրական կերպով յայտնել է առաջին քարտուղարին, որ նա այլ ևս իրան թիւրքահայերի պատրիարք չէ համարում, որոնց եկեղեցին, հոգևորականութիւնը և դպրոցները Թիւրքիայում ենթարկվում են ամեն տեսակ ճնշումների, ինչպէս և հայ ժողովուրդը։ Հայերի տրամադրութիւնը Պոլսում չափազանց գրգռված է։ Սպասում են, որ անկարգութիւններ կը սկսվեն։

«Agence Roumaine» լրագրի Պոլսից ստացած տեղեկութեան հիման վրա, Թիւրքաց զինուորական մինիստրը տեղեկութիւն է ստացել, որ պարսկական հողի վրա Սէյ-Ֆի-Մէլի-Գարէ գիւղի մօտերքում կատաղի ընդհարում է տեղի ունեցել թիւրքաց և պարսից զօրքերի մէջ։ Երկու կողմից էլ բաւականին սպանվածներ ու վիրաւորվածներ կան։ Պարսիկներին հասած օգնութեան շնորհիւ նրանց աջողվում է պահպանել իրանց դիրքը։ Թիւրքերը կենտրոնացնում են իրանց զօրքերը պարսկական Փիլաուկի շրջանում։

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

Գորիս, յուլիսի 1-ին

Յունիսի 28-ին գաւառապետ պ. Միտկևիչ հաղորդեց, որ պրիստաւ Բագրատ-բէգի դիակը ստանալու նպատակով դէպի Ալխասլու գնալիս՝ թուրքերի ահագին բազմութեան է հանդիպել, որոնք զինված՝ խիստ դիմադրութիւն են ցոյց տուել։

Թուրքերի դիմադրութիւնից և բազմութիւնից երկիւղ կրելով, զօրքը պատեհ է համարել դառնալ Սաղալլար և ապա Խոզնավար գիւղից բարձր Միհրալի-Օլան կոչված տեղում բանակ է դրել։

Թուրքերի այդ օրինակ դիմադրութիւն, նրանց մէջ ընդհանրացած նորաձև մի ճարպիկ ծրագիր է. դիրքեր թափված նրանք կռւում են, մինչև որ Ալխասլու և Ղարիղշլաղ գիւղերը կարողանան դատարկել կանանցից, երեխաներից և ապրուստից, որպէս զի որոշված պատիժներից ոչ մէկն էլ հնար լինի կատարելու։

Յունիսի 29-ին գաւառապետը և զօրքը աւելի նեղվելով երեք կողմից իրանց պաշարած թուրքերից, որոնք մէկին 10-ով են պատասխանում, կարիք են ունենում հայ գիւղացիներից օգնութիւն խնդրելու։ Հայ գիւղացիք իսկոյն օգնութեան են հասնում, և թուրքերը, թէ նրանցից և թէ նոր կօզակներից քաշվելով, թողնում են դիրքերը և փախչում։ Ապա գաւառապետը, իր ուժերին վստահանալով, հայերին յետ է դարձնում, իսկ ինքը հետամուտ լինում թուրքերին։ Առ այժմ պատմելու համար խօսք չը կայ, այլ պատմում են, թէ դարձեալ դիմադրութեան է հանդիպել գաւառապետը։

Ռուս ստրաժնիկ Սուխով պատմում է.—Ես Խնածախում էի, երբ լսեցի Բագրատ-բէգի սպանվելը, դուրս եկայ դէպի Ալխասլու գնալու. ճանապարհի վրա ինձ բռնեցին և բանտարկեցին Ղարիղշլաղ գիւղում։ Ինձ բռնողները մօսինաւորների մի խումբ էր, որոնց մէջ ճանաչեցի Նաջի աւազակապետին, միջնեցի Մոլլա Քեարիմին և ուսուցիչ Իրզային։ Երբ նրանց հարցին պատասխանեցի, թէ պրիստաւ Բագրատ-բէգի մօտ եմ գնում, վճռեցին ինձ սպանել։

Երկար խնդրանքից յետոյ, մի կերպ դուրս պրծայ, և, Մոլլա Քեարիմը ինձ հետևեալ սպառնանքը կարդալուց յետոյ, ինձ բաց թողին։ «Դու կերթաս, ասաց ինձ մոլլան, բայց ոչ մի խօսք Բագրատ-բէգի ուր լինելու մասին. մեր թիւը հարիւրաւոր, հազարաւոր է, և ամեն մէկը կարող է գուշի պէս վրա տալ և, ուր էլ լինես, ծիւ-ծիւ կանչի քեզ։ Գնա, և քո կեանքը ազատ տեսնելով Բագրատ-բէգին մոռացիր ընդմիշտ»։

Ստրաժնիկը պատմում է, թէ որքան ուրախ էր ուսուցիչ Իրզան. նրա աչքերը արիւն և վրէժ էին ցոյց տալիս նայողին։

Ինչպէս իմացանք, նոյն այդ աւազակ ուսուցիչ Իրզան գնում է գաւառապետի մօտ, որպէս թուրք ժողովրդի ցաւերի թարգման, և, երբ գաւառապետի վստահութիւնը գրաւած է համարում իրան, մի առ մի պատմում է Բագրատ-բէգի սպանութեան մանրամասնութիւնը և դիակի տեղը։

Այդ բոլորը լսելուց յետոյ գաւառապետը ասում է. «Ես չեմ իմանում, որ մանուկ կրթող ուսուցիչը կարող է աւազակ, մարդասպան և գազան լինել, ինչպիսին ես տեսնում եմ յանձին ձեր»։ Ապա ձերբակալում է և Գորիսի բանտն է ուղարկում ուսուցիչ Իրզային։

Գաւառապետը առաջ գնալով հանդիպել է մի քանի թուրքական գիւղերի, որոնք եղել են բոլորովին դատարկ։ Ոչ մի դէպք չէ եղել, որ թուրքերը դիմաւորեն գաւառապետին և զօրքին։

Գաւառապետի հասցրած և կրած վնասի մասին ստոյգ լուր չը կայ. եղածները իրանց հակայական չափերով միանգամայն չինծու են երևում մեր աչքում։

Հետևանքի մասին յաջորդ անգամ։

Սազանդարեան

ՀՈՂԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

XXIV

Ի՞նչպէս պէտք է նայել գիւղական համայնքի վրա։

Իբրև երկրագործների մի ազատ դաշնակցութեան վրա։

Եթէ դա ընդունենք մի սկզբունք և դրա կողքին դնենք նաև այն սկզբունքը, որ հողի վրա ծանրացած տուրքը պէտք է համապատասխան լինի նրա տուած եկամուտին, այն ժամանակ դժուար չի լինիլ վճռել այն հարցը, թէ ինչ վերաբերմունք պէտք է ունենայ համայնքը դէպի նոր անդամների ընդունելութիւնը և նրանց դուրս գալը համայնքից։ [illegible] իր ցանկութեամբ ընդունելու նոր անդամներ, այն ժամանակ բնականաբար նա թոյլ կը տայ, որ մտնեն այնպիսի մարդիկ, որոնք մինչև այդ եղել են ազգաբնակութեան ուրիշ դասակարգերում։

Եւ այդպիսով համայնքը կը դառնայ համադասային։

Մինչև այժմ օրէնքով խոչընդոտներ էին դրված նոր տարրերի մուտքի և նոր ուժերի հոսանքի համար դէպի գիւղերը, իսկ երբ օրէնքը կը փոխվի, այն ժամանակ ինքը համայնքը կը դառնայ իր գործերի կարգադրիչը և նրանից կախված կը լինի՝ խրախուսել արդեօք նոր անդամների ընդունելութիւնը թէ ոչ։

Միւս կողմից, թոյլ տալով որ համայնքից դուրս գան նրա անդամները, կարողութիւն է տրվում աշխատաւորների մի մասին գործադրել իր ուժերը արդիւնագործութեան այն ճիւղերում, որտեղ նրանք աւելի արդիւնաւէտ կը լինեն։ Գիւղացիների համայնքից դուրս գալը չի վնասի մնացած անդամներին, որովհետև, ինչպէս ասացինք, հողի վրա նշանակված տուրքը պէտք է համապատասխան լինի նրա արդիւնքին։

Անշուշտ ինչպէս մուտք գործելու համար համայնքի մէջ, այնպէս և այնտեղից դուրս գալու համար որոշված կը լինեն յայտնի պարտաւորութիւններ համայնքի առանձնայատկութիւնների և տնտեսական բնաւորութիւն ունեցող պայմանների մասին։

Դրանք այնպիսի մանրամասնութիւններ են, որոնց քննութիւնը պէտք է վերապահված լինի տեղական մշակութեան համար։

XXV

Մեր յօդուածի ծաւալը թոյլ չի տալիս կանգ առնել մի շարք հարցերի վրա, ինչպէս են, օրինակ, երկրագործական և արդիւնագործական աշխատանքների մէջ եղած յարաբերութիւնը, հողային տարածութեան այն քանակը, որ անհրաժեշտ է մի խելացի, խոշոր տնտեսութիւն վարելու և ուժեղ աշխատաւորների մի սոցիալիստական խմբակցութիւն կազմելու համար, այն տեղերի վիճակը, որոնք ազատ կը մնան գիւղացիութեան կարիքները հոգալուց յետոյ, մասնաւոր կալուածատիրական հողերի գնահատութեան չափերը, որոնցով նրանք, պէտք է պետական դարձնվեն, օրէնսդրութեան վերաբերմունքը դէպի հողատիրութեան և հողաշահեցութեան զանազան տեսակները և այլն։

Այս հարցերը կարող են նիւթ ծառայել յատուկ յօդուածների և զեկուցումների համար զանազան առիթներով. իսկ մեր յօդուածների ներկայ շարքից, մենք կարծում ենք, կարելի է առաջ բերել մի շարք եզրակացութիւններ, իբրև գործնական նշանակութիւն ունեցող թեզիսներ։

XXVI

Ահա այդ թեզիսները՝

1. Ընդարձակել գիւղական հողերը

տարածութիւնը պետական կալուածատիրական հողերով, որոնք գտնւում են իրապէս նրանց տրամադրութեան տակ ներկայումս։

2. Յատկացնել գիւղացիներին և այն բոլոր հողերը, որոնք թէև չեն գտնւում նրանց տրամադրութեան տակ, բայց կարևոր են նրանց հողային կարիքները լրացնելու համար։

3. Այդ հողերից կազմել կտորներ այն գիւղացիների համար, որոնք սակաւահողութեան պատճառով կը ցանկանան թողնել իրենց ծննդավայր գիւղերը և տեղափոխւել վէպի աւելի ընդարձակ տեղեր։

4. Հողերը տրւում են գիւղացիներին, իբրև պետական հողեր, իբրև լրացում գիւղական հողաբաժինների։

5. Մասնաւոր հողատէրերի հողերը յետ են գրւում պետական գանձարանի հաշւով։

6. Բացի այս ընդհանուր միջոցից, որով պէտք է հողը աւելացնի գիւղերում, ցանկալի է ամէն կերպ աջակցել գիւղացիներին, որ նրանք ձեռք բերեն հողեր թէ գիւղացիական և թէ մասնաւոր բանկերի միջոցով։

7. Գիւղական հողերի վրա դրված տուրքերը պէտք է համապատասխան լինեն հողերի արդիւնաւէտութեան։

8. Հողային համայնքը հրապարակւում է համայնքային և համայնքին իրաւունք է տրւում իր մէջ ընդունել անդամներ և ուրիշ դասերից։ Համարել համայնքը կենսունակ զարգացման համար և նպաստել այդ զարգացմանը։

9. Գիւղացին իրաւունք է տրւում դուրս գալ հողային համայնքից։ Նա իրաւունք ունի վարձատրութիւն պահանջել միայն շինութիւնների և հողի բարելաւումների համար, բայց ոչ հողի համար, որը պէտք է ընդհանուր ճանաչվի գիւղացիների համար (բաց առեալ այն դէպքերը, երբ գիւղական հողը կազմում է գիւղացիների մասնաւոր սեփականութիւնը)։

10. Հողաբաժանութեան հիմք ընդունել շնչերի թիւը առանց խտրութեան դնելու հասակի և սեռի մէջ։

11. Հողաբաժանութիւնը պէտք է կատարել, ուշադրութեան առնելով հողի վրա արված բարելաւութիւնները և կուլտուրաների բնաւորութիւնը։

12. Մտցնել մանր գիւղատնային միութիւններ։

13. Հողի կապալառութեան օրէնքի մշակում։ Ազատել գիւղացուն կապալառուների հարստահարութիւններից։

14. Իրաւունք տալ գիւղացիներին թէ մի մեծ գիւղից կազմել մի քանի մանր գիւղեր, յատկացնելով նրանց համապատասխան քանակութեամբ հողեր, և թէ ընդհակառակը մանր խմբերից կազմել մեծ գիւղեր։

15. Պետութիւնը պէտք է նիւթապէս քաջալերէ արդիւնագործական ընկերակցութիւնների կազմակերպութիւնները, մանր կրեդիտի հիմնարկութիւնը, գործիքների, սերմերի և ուրիշ նիւթերի նախկին կայարանների և կրթական ուրիշ հիմնարկութիւնների բազմացումը։

Ա. Քալանթար

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

XLVI

Պետական Դուման արձակւեց...։

Այս լուրը կայծակի արագութեամբ տարածւելով ամբողջ կայսրութեան մէջ աննկարագրելի յուզմունք պէտք է առաջ բերէ ազգաբնակութեան բոլոր այն խաւերի մէջ, որոնք սովորել էին արդէն նայել Պետական Դումայի կամ ռուսական առաջին պարլամենտի վրա իբրև այն միակ հաստատութեան վրա, որտեղից պէտք է բղխեր Ռուսաստանի փրկութիւնը և որը պէտք է իրագործեր ազատագրութեան մեծ գործը։

Բայց այդ յոյսերը չիրականացան, և Դումայի արձակման շշմեցուցիչ լուրը վրա հասաւ հէնց այն րոպէին, երբ ամենից քիչ էր սպասւում, երբ արդէն սկսել էր տիրապետել այն կարծիքը, թէ կառավարութիւնը արդէն որոշել է զիջել, թէ անխուսափելի է նոր մինիստրութեան կազմումը Դումայի մեծամասնութիւնից։

Որքան յոյսեր յօդս ցնդեցին, մանաւանդ պէս որքան կը տուժենք մենք հայերս, որովհետև մեր բոլոր յոյսը հայ-թիւրքական արիւնահեղ ընդհարումների վերջացութեան մասին դրված էր Դումայի վրա, երբ նա, աւարտելով իր օրէնսդրական գործունէութիւնը, կը կարգադրէր կարգ, իրաւունք, անդորրութիւն հաստատել ընդհանուր երկրի մէջ և դրանով վերջ կը տար նաև հայ-թիւրքական արիւնահեղ ընդհարումներին։

Այժմ նորից վերադարձանք այն շրջանը, որ գոյութիւն ունէր Դումայից առաջ։ Ռուսաստանը նորից պէտք է կառավարվի հին բիւրոկրատիայի ձեռքով մինչև նոր Դումայի գումարումը, մինչև 1907 թ. փետրվարի 20-ը, ամբողջ 7 ամիս։

Սակայն, ով ուշի ուշով, սիստեմատիկաբար հետևել է Դումայի գործունէութեան, նրա համար շատ էլ անակնկալ չը պէտք է լինէր ներկայ եղբը։ Վերջին օրերը արդէն պարզ էր, որ մինիստրութեան ամեն մի հանդիպումը ժողովրդական ներկայացուցիչների հետ Տաւրիկեան պալատում՝ ուղղակի ցոյց էր տալիս երկու հակառակորդ և թշնամի բանակների հանդիպումը։ Այն վերին աստիճանի ինքնավստահ, խրոխտ տոնը, որով խօսեց Դումայում Ներքին գործերի մինիստրի օգնական Մակարովը իր բացատրութիւնները ներկայացնելիս 33 հարցապնդումների մասին, արդէն պարզ ցոյց էր տալիս, որ կառավարութիւնը անհաշտ և անզիջող դիրք է բռնել և որոշել է ընդունել այն կռիւը, որ Դուման յայտարարում էր նրան։ «Այսպէս,—շատ ճիշտ նկատում է «Ստրանա» լրագիրը,—կառավարութիւնը Դումայի պահանջին՝ դադարեցնել բռնութիւնները չէր պատասխանի այսպէս. «Մենք այդ չենք կամենում, մենք այդ թոյլ չենք տայ»։ Այսպէս յանդուգն կերպով խօսել օրէնսդրական իշխանութեան հետ կարելի է միայն պատերազմ յայտնելուց յետոյ և այն ժամանակ, երբ լաւ սպառազինված են»։

Եւ ահա այդպէս լաւ սպառազինված կառավարութիւնը միայն մի առիթի էր սպասում՝ իր ոյժը ցոյց տալու և հեռացնելու ասպարէզից այն օրգանը, որը շարունակ դատափետում էր սրա ապօրէն գործողութիւնները, մերկացնում էր նրան երկրի առաջ։ Եւ Դուման, խոհեմ, զգոյշ Դուման տուեց կառավարութեան այդ առիթը, երբ որոշեց կոչով դիմել ժողովրդին։

Նա ուրիշ կերպ էլ գուցէ վարվել չէր կարող. համբերութեան բաժակը արդէն լցվել էր։ Նա պարտաւոր էր ժողովրդին դիմել և ստանալ նրա հաւանութիւնը, աջակցութիւնը՝ շարունակելու իր գործունէութիւնը։ Եւ նրա կեանքը կարճվեց՝ գործունէութեան ամենաեռանդուն րոպէին։

Բայց ինչ արեց նա իր կարճատև, մօտ 2¼ ամսվայ գոյութեան ընթացքում. այս հարցը տալիս են շատերը։ Ծայրայեղ կուսակցութիւնների կարծիքով, նա ոչինչ չարեց և միայն ճառախօսութեամբ զբաղվեց։ Այդ կարծիքը, ի հարկէ, սխալ է և անարդար սխալ։ Ոչ։ Դուման շատ բան արեց երկու ամսվայ ընթացքում. նա ցոյց տուեց, համոզեց անհերքելի կերպով, որ բազմամիլիոն Ռուսաստանը վերջնականապէս դատապարտել է հին ռէժիմը և իր բոլոր ոյժերով ձգտում է նրա ոչնչացման։ Նա ցոյց տուեց, որ ռուսական ժողովուրդը լցված է ցանկութեամբ իր ազատագրութիւնը, իր վերածնութիւնը իրագործել խաղաղ, էվօլիւցիօնական ճանապարհով և չը դիմել յեղափոխական միջոցի, իսկ եթէ այդ եղանակը անհնարին լինի, դրա մէջ արդէն մեղաւոր է ինքը կառավարութիւնը։ Պատգամաւորների արտասանած ճառերը, յաճախ տաղանդաւոր և հմտալից ճառերը շատ բան պարզեցին ժողովրդին և շատ բան լուսաբանեցին։ Դուման քաղաքականապէս դաստիարակեց ռուս ժողովուրդը, և ապագայ պատմութիւնը կը կարողանայ ըստ արժանւոյն գնահատել նրա կատարած մեծ ծառայութիւնը։

Դումայի արձակումը միևնոյն ժամանակ պարզ ցոյց է տալիս, որ կառավարութիւնը բաղկացած կը լինի ամբողջովին հին ռէժիմի կուսակիցներից և պաշտպաններից, և բոլորովին անտեղի են այն յոյսերը, թէ մենք կարող ենք ունենալ փոքր ի շատէ ազատամիտ և տարբեր ուղղութիւն ունեցող կաբինետ։ Ոչ, մենք չենք ունենայ կաբինետ նոյն իսկ կոմս Հէյդէնի, Շիպովի մասնակցութեամբ։ Նոր կառավարութիւնը, ինչպէս երևում է հեռագիրներից, իրան գլխաւոր նպատակն է դրել հալածել յեղափոխականներին և վերահաստատել կարգն ու անդորրութիւնը ամենախիստ միջոցներով։

Բայց կաջողվի՞ նրան այդ. ահա մի հարց, որի լուծումը թողնված է միայն ապագային։ Իսկ այդ ապագան վերին աստիճանի մութն և անորոշ է։

Շահրիար

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԿԵԱՆՔԻՑ

(Նամակ Մոսկվայից, յուլիսի 5-ին)

I

Ամսիս 2-ին, Մոսկվայի ժողովրդական տան այգում, մամուլի աշխատաւորների ընդհա- [illegible] Պետական Դումայի անդամ, յայտնի սոցիալ-դեմոկրատ պ. Ռամիշվիլի մի զեկուցում արեց «Ռուսաստանի ժամանակակից դրութեան և սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան տակտիկայի մասին»։

Ցոյց տալով պատմական այն մեծ մոմենտը, նշանաւոր այն րոպէն և հետաքրքրական այն ժամանակը, որի մէջ ապրում է լայնածաւալ Ռուսաստանը, նա մատնացոյց արեց վճռական մոմենտի մօտիկութեան վրա։ Անցնելով ժողովրդական մութ տարրերին, նա հրաւիրեց սովորեցնել նրանց, քանի որ նրանք ապագայ ընկերներ են կռւի դաշտում. նրանք յետոյ հասկանալով իրերի իսկական դրութիւնը, ժողովրդական մասսայի հետ ձեռք ձեռքի տուած, առաջ կը տանեն յեղափոխութեան դժուարին ու ծանր գործը։

Պրոլետարիատի մասին ասաց, որ նա պէտք է մշակէ կուռ ընդհանուր նախագիծը, միանալով յեղափոխական և կռւող այն գիւղացիութեան հետ, որի դրօշի վրա սրբազան տառերով գրված է ամենքիս յայտնի «կտրվենք հին աշխարհից» խօսքերը։

Այստեղ ճառախօսին ընդհատեցին այն բուռն, որոտալից և միաձայն ծափահարութիւնները, որ արտայայտեց ութ հազար հոգուց բաղկացած բազմամարդ ժողովը։

Ապա նա յայտնեց, որ Դումայում կան 17 սօցիալ-դեմոկրատ պատգամաւորներ, որ վերջիններս պաշտպանում են կադէտներին միայն այն ժամանակ, երբ նրանց ճառերը ռուսական բիւրոկրատիայի հիմքերը փորելուն են վերաբերում, որ սոց.-դեմոկրատների այն բոլոր առաջարկութիւնները, որ Դումայի կողմից չեն ընդունվում, միշտ, ինչպէս և՛ ամեն տեղ, պաշտպանվում են պրոլետարիատի կողմից։

Կադէտների մասին յայտնեց, որ նրանք իրանց շատ համեստ և օրինապահ են պահում, որ նրանք չեն հասկանում ժողովրդի ոգին, որ այն ազատութիւնը, որին ձգտում է ժողովուրդը, բոլորովին օտար է նրանց համար, և որ նրանց օրինագծերի մէջ պարզ նշմարելի են բուրժուական հոգեբանութեան նշաններ։

Գալով պատգամաւորական մինիստրութեան մեծամասնութեանը, նա յայտնեց, որ սոց.-դեմոկրատները պաշտպան են այդ անհրաժեշտ պահանջին, քանի որ սկզբունքային տեսակէտից մինիստրութիւնը պէտք է Դումայի մեծամասնութեան վստահութիւնը վայելէ։ Բայց որովհետև այդ պահանջը դժուար թէ իրագործվի, այդ պատճառով էլ պէտք է առաջ գայ պատգամաւորների յեղափոխական դրութիւն, որը իր գործունէութիւնը կը տարածէ ժողովրդի մէջ, և յեղափոխական ճանապարհով միայն կարելի է հասնել սահմանադիր ժողովի, այդ միակ և կանոնաւոր ժողովրդական ներկայացուցչութեան։ Վերջում յայտնեց, որ սոց.-դեմ. կուսակցութիւնը արդէն կապ է հաստատել Պետերբուրգի բանւորների հետ, որոնք պատգամաւորների հետ միասին քննում են ընթացիկ գործերը. կուսակցութիւնը յոյս ունի, որ մօտ ապագայում կը վերականգնի իր կապը Ռուսաստանի բոլոր բանւորների հետ։

Պ. Ռամիշվիլիի զեկուցումը լսվում էր խորին ուշադրութեամբ և կենդանի հետաքրքրութեամբ, որն ընդունվեց բուռն ծափահարութիւններով։

Ժողովը զեկուցումը լսելուց յետոյ հետևեալ որոշումը կայացրեց. «Մամուլի աշխատաւորների ընդհանուր ժողովը ողջունում է ռուսական սոց.-դեմ. բանւորական կուսակցութեան անդամ Ռամիշվիլիին, որը վրաց պրոլետարիատի և յեղափոխական գիւղացիութեան կողմից Պետական Դումայի անդամ է ընտրված և որին, յանձին ընկեր Ռամիշվիլիի, արտայայտում ենք մեր խորին յարգանքները։ Մենք ողջունում ենք ընկեր Ռամիշվիլիին, որպէս Դումայի ս.-դ. կուսակ. ներկայացուցչի և խնդրում ենք յանձնել կուսակցութեան, որ մենք ուշադրութեամբ հետևում և ամենաջերմ կերպով համակրում ենք կուսակցութեան և միշտ պատրաստ ենք պաշտպանել նրան։ Ողջունում ենք ընկեր Ռամիշվիլիին, որպէս հին մարտիկի բանւորական դասի և ամբողջ ժողովրդի ազատութեան համար բռնութիւնից, և, որպէս նշան մեր խորին յարգանքի դէպի նրա մատուցած ծառայութիւնները, ընկեր Ռամիշվիլին ընտրում ենք մեր միութեան պատուական անդամ»։

Պ. Ռամիշվիլի, իր շնորհակալութիւնը յայտնելով ժողովին նրա ցոյց տուած յարգանքի ու պատւի համար, ասաց, որ, չնայած որ ինքը վրաց ժողովրդի կողմից է ընտրված, բայց նա ընտրված է որպէս կանդիդատ սոց.-դեմ. կուսակցութեան, որպէս պրոլետար, որի համար բոլոր երկրների պրոլետարիատը կազմում է մի ազգութիւն, որոնք ունեն մի դաւանանք, մի սրբութիւն, մի աստուածութիւն—սոցիալիզմ։

Այնուհետև վճռվեց պաշտպանել Պետական Դուման և ամեն տեսակ միջոցներով կռւել կառավարութեան դէմ ժողովրդական իրաւունքներ ձեռք բերելու նպատակով։

Մի քանի ժամ տևող ժողովը վերջում խաղաղ ցրվեց առանց որ և է ինցիդենտի։

Պ. Ռամիշվիլին, բացի այդ, եղել է նաև ուրիշ ժողովներում և միտինգներում, որտեղ միշտ էլ միևնոյն սիրալիր ընդունելութիւնն է գտել և համակրանքի արժանացել։

Պ. Ռէյնբոտ, Մոսկվայի քաղաքագլուխը, ի նկատի ունենալով որ պ. Ռամիշվիլի ճառերը, որ նա արտասանել է զանազան միտինգներում, բաւական համարձակ և հակակառավարչական բովանդակութեամբ են եղել, մի հեռագիր-շրջաբերականով կարգադրել է ոստիկանութեան, այսուհետև թոյլ չը տալ կողմնակի մարդկանց ժողովներում և միտինգներում ճառ արտասանել առանց իր նախօրօք թոյլտուութեան։

Ահա ձեզ մի նոր ռեպրեսիա, խօսքի ազատութեան բռնաբարում, ժողովրդական ամենանուիրական իրաւունքներից մէկի ոտնահարումն... Եւ այս բոլորը ամեն օր, միշտ. մինչև երբ...

Ոսկու-Ջօն

ՁԵՌՔԸ ՁԵՌՔԻՆ ԼՈՒԱՆՈՒՄ Է

Վերջին ժամանակներում թէ մայրաքաղաքի լրագրներում և թէ զանազան շրջաններում սաստիկ յամառութեամբ լուրեր են պտտում այն մասին, թէ կառավարութիւնը [illegible] րով համաձայնութեան է եկել միահամուռ ոյժերով Ռուսաստանի յեղափոխութիւնը ճնշելու համար։ Այդ համաձայնութեան մէջ, ի հարկէ, առաջին տեղը բռնում է գերմանական Վիլհելմը։

Եթէ յիշում են ընթերցողները, դեռ անցեալ տարի լրագրների մէջ խօսվում էր միայն այն մասին, թէ Գերմանիան խոստացել էր մեր կառավարութեան տրամադրութեան տակ դնել իր զօրքը այն պարագայում, երբ Լեհաստանում ապստամբութիւն ծագի։ Իսկ հիմա խօսվում է այլևս ոչ միայն Լեհաստանի, այլ և ամբողջ Ռուսաստանի ազատագրական շարժումները ճնշելու մասին։

Թէև կառավարութիւնը ամեն կերպ աշխատում է հերքել այդ լուրերը, բայց և այնպէս նրանք չեն դադարում յամառութեամբ պտտել և իրանց վրա դարձնել հասարակութեան որոշ շրջանների ուշադրութիւնը, մանաւանդ որ կառավարչական հերքումները իրանց յաճախակի ստախօսութեամբ այլևս ոչ ոքի մէջ հաւատ և վստահութիւն չեն ներշնչում։ Օրինակի համար դեռ հէնց երեկ, յուլիսի 7-ի հեռագիրը Պետերբուրգից հաղորդում էր, թէ՝ ոստիկանութեան վարչութիւնը վճռականապէս հերքում է լրագիրների հաղորդած լուրը, որ իբր Պետերբուրգ մեծ թւով զօրքեր են բերված, իսկ յուլիսի 8-ի հեռագիրը նոյն տեղից հաղորդում էր, որ յիրաւի Պետերբուրգ են բերված մի քանի վաշտ հետևակ, հեծեալ և թնդանօթաձիգ զօրքեր։

«Գերմանիայի հետ համաձայնութեան գալու մասին յամառութեամբ պտտող այդ լուրերը,—ասում է «Գոլոս Տրուդա» թերթը,—բոլորովին հիմնաւոր կարելի է համարել։

«Մի կողմ թողնելով Վիլհելմ II-ի ինքնակալական և ֆէօդալական ձգտումները, պաշտօնական Գերմանիայի ամբողջ քաղաքականութիւնը այս վերջին տարիներում շատ լուրջ կասկածներ ու վախ է ներշնչում Ռուսաստանի ազատութեան գործիչներին և կողմնակիցներին։

«Ռուս յեղափոխականներին և նոյնիսկ ռուս ուսանողներին հալածելը Գերմանիայում, Պրուսիայի դատաստանական և ադմինիստրատիւ վարչութիւնների ապօրէն կերպով ռուս կառավարութեանը ծառայութիւններ մատուցանելու տենչը, ռուս լրտեսների լկտի և համարձակ գործունէութիւնը Բեռլինում, գերմանական արքունիքի եռանդուն աջակցութիւնը ռուսաց փոխառութիւնների մէջ, որոնց միակ նպատակն էր միջոցներ ձեռք բերել յեղափոխութեան դէմ կռւելու համար, վերջապէս գերմանական բարձր շրջանների ունեցած ազդեցութիւնը ռուսաց նոյն կարգի շրջանների վրա, խորհրդաւոր տեսակցութիւնները, նամակները, բարեկամական խորհուրդները,—այս բոլորը քաղաքացիների մէջ միշտ վախ և կասկած են ներշնչում, թէ օտարները կարող են Ռուսաստանի ներքին գործերին միջամտել։

«Բացի դրանից,—շարունակում է վերոյիշեալ թերթը,—այն կատարեալ քայքայումը, որ պետական տնտեսութեանը հասցրեց կամայական բիւրոկրատիայի գիշատիչ քաղաքականութիւնը, և արտասահմանեան բուրժուազիայից ունեցած այն կախումը, որի մէջ կամարիլիան դրեց մեր երկիրը իր անմիտ և վիթխարի փոխառութիւններով, այնպիսի ամուր կապերով կաշկանդեցին մեր կառավարութեանը արտասահմանեան յետադիմականների և վաշխառուների հետ, որ օտարների ազդեցութիւնը արդէն շատ անգամներ է զգացվել Ռուսաստանի քաղաքական կեանքի մէջ։ Ինչպէս արդէն քանիցս անգամ ասվել է սոցիալ-դեմոկրատական մամուլի մէջ, հին ռէժիմի կառավարութեան այժմեան քաղաքականութիւնը անխուսափելիօրէն տանում է դէպի այն, որ Ռուսաստանը հետզհետէ մի գաղթավայր (կօլօնիա) է դառնում, որի ճակատագիրը անօրինում են միջազգային բանկիրների մի խումբ և նրանց հետ անքակտելի կերպով կապված կառավարութիւնները։

«Տխուր իրականութիւնը օրէ ցօր աւելի ու աւելի է արդարացնում այս նախագուշակութիւնը։ Մենք տեսնում ենք, թէ ինչպէս եւրոպական յետադէմ բուրժուազիան մի օր փող է տալիս ռուսաց ռէակցիան փրկելու համար, մի օր էլ յանդիմանական խրատներ է կարդում անմիտ գործողութիւնների և կառավարելու ստիպական միջոցների պատճառով։ Մենք տեսնում ենք, որ կամարիլիան իր կատարած իւրաքանչիւր քայլով Ռուսաստանին մօտեցնում է Թիւրքիայի դրութեանը, որը բոլոր եւրոպական գիշատիչների խնամակալութեան տակ է գտնւում։ Մենք տեսնում ենք, որ, ինչպէս և միշտ հին ռէժիմի քայքայման շրջանում ու նրա վերջնականապէս խորտակվելու նախընթաց օրը, պաշտօնական իշխանութիւնը կորցնում է իր վերջին թելը, որը նրան ժողովրդական մասսաների հետ է կապում, ամենահասարակ ազգային արժանապատւութեան զգացմունքը։

«Գուցէ, գերմանական և ռուսական կամարիլաների միջև ենթադրվող համաձայնութիւնը դեռ ևս պաշտօնական պայմանագրի ձև չէ ստացել։ Բայց օտար կառավարութիւններից և վաշխառուներից ունեցած այն կախումը, որի մասին մենք ասացինք, անհերքելի իրողութիւն է։ Իսկ դրանից բոլորովին հեռու չէ և ուղղակի համաձայնութիւնը։

«Ռուսաց կամարիլիան, բոլոր երկրների և բոլոր ազգերի կամարիլիաների նման նոյնանման պատմական հանգամանքներում, չի քաշվի և օտարերկրեայ զինւորներով հեղեղել Ռուսաստանը ու մայրենի դաշտերը ցօղել ռուսական արիւնով։

«Այդ պատճառով էլ ռուս ժողովուրդը պէտք է ուշադրութեամբ վերաբերվի կամարիլիայի արտասահմանեան ռէակցիայի հետ համաձայնութեան գալու մասին պտտող անհանգստացուցիչ լուրերին։

«Պետական դաւաճանութիւնը բարձր բիւրոկրատիայի կողմից իսկապէս որ նորութիւն չէ պատմութեան մէջ։ Կամարիլիայի հայրենասիրութիւնն ու ժողովրդասիրութիւնը մինչև այն ժամանակ է տևում, քանի որ հայրենիքը մի կթան կով է նրա համար և ժողովուրդը՝ աշխատաւոր ու հլու հնազանդ եզներ։ Իսկ հէնց որ այդ կովն ու եզները, համբերութիւնը հատած, սկսում են իրանց կոտոշները ցոյց տալ, կամարիլիան, մոռանալով ու ոտքի տակ տալով ամեն սրբութիւն, խնդրում իր եղբայր կամարիլիայի օգնութեանն է դիմում, [illegible] ժողովրդին խելքի բերելու համար։ Կրկնում ենք, այդպիսի «հայրենասիրական» ու «ժողովրդասիրական» դէպքեր չափազանց շատ են պատահել հին ու նոր պատմութեան մէջ։ Բաւական է այստեղ յիշել միայն այն, որ XIX-դ դարի առաջին կէսում ռուսաց զօրքի սուիններով խելքի բերվեցին Աւստրիայի «ապերախտ ու անհնազանդ» յեղափոխականները, և Հաբսբուրգների գահն ու թագը փրկվեց։ Եւ այդ պարտքը մինչև այսօր դեռ չէ վճարված ռուս բիւրոկրատիային գերմանական կամարիլիայի կողմից, ինչ, ի հարկէ, չէ մոռացել ռուս բիւրոկրատիան։ Միթէ հիմա ճիշտ յարմար առիթը չէ՞ այդ պարտքը յիշեցնելու և գերմանական սուինների օգնութեանը դիմելու, քանի որ ռուսականները այլևս անհնազանդութեան նշաններ են ցոյց տալիս։ Եւ չէ՞ որ, ռուսական բիւրոկրատիային փրկելով, գերմանական կամարիլիան կողմնակի կերպով փրկած կը լինի և իրան։ Ձեռքը ձեռքին լուանում է և երկուսն էլ միշտ մաքուր են դուրս գալիս։

Ռ.

ՄԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ-ԿԱԹՕԼԻԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

I

Կարդացի «Մշակի» № 144-ում Հ. Գ. Ն.-ի «Մի պատասխան» վերնագրով յօդուածը։ Ես չէի կարող ենթադրել թէ Հ. Գ. Ն. տէր Սարգիս վ. Տէր-Աբրահամեանի դէմ ունեցած անձնական հակակրութիւնն այն աստիճան առաջ կը մղէր, որ թոյլ կը տար իրան մի շարք անհեթեթութիւններ, պարզապէս հայ-կաթօլիկ հասարակութեան մաքերը պղտորելու համար։

Երբ առաջին անգամ նա «Մշակում» հանդէս եկաւ, աշխատելով սխալ դուրս բերել իմ հաղորդած մի տեղեկութիւնը, ես զարմացայ. զարմացայ, որովհետև փոխանակ ինձ դիմելու և բացատրութիւն ուզելու նա՝ պահպանելով ինձ հետ մտերմական յարաբերութիւն, որի կեղծ լինելն այժմ եմ միայն հասկանում, միևնոյն ժամանակ լրագրութեան դիմեց իմ դէմ։ Այն անգամ ես խնայեցի նրան, չը պատասխանեցի հրապարակով, լսելով մի ընդհանուր բարեկամի թելադրութեան, և նրան տուի բերանացի բացատրութիւն։ Բայց, ինչպէս տեսնում եմ, իմ լռութիւնը նա տարբեր կերպով է մեկնել, ուստի այս անգամ այլ ևս անհնար եմ համարում լռել և ստիպված եմ մի առ մի պարզել, թէ ո՛վ է «մաշած դիմակ» հագնողը և ո՛վ է յայտնի իրողութիւնների այդպէս հրապարակով խեղաթիւրողը՝ միմիայն իր անձնական կրքերին յագուրդ տալու համար...

Սկսենք քննել Հ. Գ. Ն.-ի «Մի պատասխանը» կէտ առ կէտ։

Հ. Գ. Ն. ասում է. «Սարատովի եպիսկոպոսն վատ տրամադրողն և թելադրողն եղած էր տէր-Սարգիս Տէր-Աբրահամեանը, որ Սարուխանի ձեռներէցութեամբ հաւաքել տուաւ գաւառների լիազօրներին, որպէս զի հասկացնեն թէ Հռոմ վերջնականապէս մերժել է Մխիթարեան թեկնածութիւնը և անպատճառ միաբանին զտէր-Սարգիս ընտրելու»։

Քանի որ Հ. Գ. Ն. ոչ մի փաստ առաջ չէ բերում. ապացուցանելու թէ տ.-Սարգիս «թելադրող» և «վատ տրամադրող» է եղել, մենք իրաւունք ունենք մեծ կասկածով վերաբերվելու նրա խօսքին, գիտենալով հայր Գաբրիէլ Նահապետեանի թշնամական յարաբերութիւնը դէպի տէր-Սարգիս։ Ես թողնում եմ առկախ այս կէտը և ուզում եմ բացատրութիւն տալ հարցի այն մասի նկատմամբ, որ ինձ է վերաբերում։ Հայ-կաթօլիկների համագումարի ժողովելու հարցում Տէր-Աբրահամեան բացարձակապէս ոչ մի մասնակցութիւն չէ ունեցած. ես նրա հետ այդ մասին ոչ մի գրագրութիւն չեմ ունեցած, ուստի Հ. Գ. Ն.-ի հաղորդածը բոլորովին անճիշտ է։

Դէպքը տեղի է ունեցած հետևեալ կերպով։ Անցեալ տարի, մայիսի 4-ի երեկոյեան, Պ. Ի. Գուրգէնեանի հրաւէրով նրա տանը հաւաքվել էինք հ. Դիոն վ. Գազաոսեան, հ. Գաբր. Նահապետեան, Յակոբ և Պօղ. Գուրգէնեան եղբայրները, Պօղ. Կարա-Մուրզա և ես։ Այդտեղ երկար խորհրդակցելով մենք անհրաժեշտ համարեցինք օգտւել նոր եկող Փոխարքայի բարի տրամադրութիւնից և նրան մի աղերսագիր ներկայացնել Կովկասի հայ-կաթօլիկների եկեղեցական և դպրոցական գործերի մասին։ Եւ որպէս զի այս աղերսագիրը ընդհանուր ժողովրդի հաւանութիւնը կրէր, որոշվեց մի համագումար ժողով հրաւիրել Թիֆլիսում։ Լիազօրներ հրաւիրելու հոգը յանձնվեց Ախալցխայի վիճակի համար հ. Գազաոսեանին, Ալեքսանդրապօլի և Լօռու կողմերի համար հ. Գ. Նահապետեանին, իսկ Արդուինի թեմի համար՝ ինձ։ Աղերսագրի ծրագիրը կազմել յանձն առեց պ. Պ. Կարա-Մուրզա և ես։ Հետևեալ օրն իսկ սկսեցինք գործի, և ես այստեղ անկեղծ շնորհակալութիւն եմ յայտնում Արդուինի թեմի հայ-կաթօլիկներին, որոնք իմ մի շրջաբերական հեռագրի վրա յենվելով անմիջապէս ժողովրդական ընտրութիւններ կատարելով, որոշեալ օրը, մայիսի 12-ին, ամեն կողմից լիազօրներ ուղարկեցին Թիֆլիս այն ժամանակ, երբ միւս կողմից ոչ ոք չէր եկել. յետոյ միայն պ. Բէբուրեան եկաւ Ալեքսանդրապօլից օրինաւոր ընդհանուր ընտրութեամբ։ Ուրեմն ինչպէս է Հ. Գ. Ն. խեղաթիւրում մի յայտնի դէպք, որի մասին այդչափ կենդանի վկաներ կան։ Համագումարի նպատակը ոչ տէր-Սարգսի թեկնածութեան աջակցելն էր, ոչ էլ Մխիթարեան թեկնածուների մերժումը։ Մեր կազմած աղերսագիրը աւելի ընդհանուր հանգամանք ունէր. նրա բազմաթիւ կէտերից միայն մէկն էր վերաբերում «Թեմական կառավարիչ» ընտրութեան հարցին։

«Ժողովականները, ասում է Հ. Գ. Ն., լսելով իմ բոլոր բանաւոր պատճառաբանութիւնները, սկզբունքի տեսակէտից մերժեցին միաձայն տէր-Սարգսի թեկնածութիւնը և համաձայնվեցան տէր-Պօղոս Նահապետեանին ընտրելու ժամանակաւոր կառավարիչ»։

Բոլորովին անճիշտ։ Հ. Գ. Ն.-ի այս անտեղի ինքնագովութիւնը ստիպում է ինձ յայտնել, որ տէր-Պօղոս Նահապետեանի ընտրութիւնը տեղի է ունեցել հայր Գաբրիէլ Նահապետեանի լաւ ծանօթ մի պետական պաշտօնեայի յորդորով, կամ աւելի ճիշդ՝ բարոյական ճնշման տակ, որովհետև այդ պաշտօնեան խոստանում էր՝ թէ սեպհական կազմելուն օգնել և թէ գործի աջողութեանը նպաստել, եթէ Տ. Պօղոս ընտրվէր. և այդպէս էլ եղաւ։ Այս հանգամանքը ծանօթ է համագումարին ներկայ բոլոր լիազօրներին։ Բացի դրանից՝ համագումարի հէնց առաջին նիստում Արդուինի թեմի պատգամաւորները որոշ պահանջ դրին—և իրաւացի պահանջ—Արդուինի եպիսկոպոսական աթոռի իրաւանց մասին, որին սաստիկ հակառակվեց Հ. Գ. Ն.։ Պառակտումը առաջն առնելու համար ես միջամտեցի, և որոշվեց ի նկատի ունենալ մի ընդհանուր կովկասեան թեմ։

«Մեր պետիցիան տալէն հազիւ անցել էր երկու ամիս, շարունակում է Հ. Գ. Ն., Ախալցխայի հոգևոր կառավարութիւնն և չորս աւագութիւնք յանդիմանական մի թուղթ են ստանում Սարատովի եպիսկոպոսից, յորում նա պարսաւում է լիազօրների կատարած գործը։ Հոգևոր կառավարութիւնը և դեկանները լռեցին, լռեց նաև մեր բիւրօն... աւելի նպատակաւոր համարեցաւ ծանուցանել պրոպագանդայի նախագահին... Բայց ինձ թւեցաւ, որ պ. Սարուխան անկեղծ չէր իր տուած խորհրդով...»։

Դարձեալ անճշտութիւն, դարձեալ խեղաթիւրում։ Սարատովի եպիսկոպոսի այդ յանդիմանութեան մասին առաջին անգամ ես տեղեկացայ, եթէ չեմ սխալվում, «Մշակում» տպված մի լուրից, և անմիջապէս խնդրեցի հ. Գաբրիէլ Նահապետեանից, որ նա գրէ Ախալցխա, կամ մի որևէ դեկանի և բերել տայ եպիսկոպոսի այդ գրութեան մի պատճէնը։ Ես առաջարկում էի իսկոյն բողոքել Հռոմ եպիսկոպոսի դէմ և միևնոյն ժամանակ գրել հայ-կաթօլիկ կաթողիկոսի Հռոմում ունեցած պաշտօնական ներկայացուցչին, որ նա էլ պաշտպանէ մեր բողոքը։ Եւ իմ այս առաջարկութիւնը միակ օրինական բողոքի ձևն էր, որովհետև եպիսկոպոսի արարմունքի դէմ կարելի է գանգատվել նրանից բարձր հոգևոր իշխանութեան, մանաւանդ որ դեռ քիչ ժամանակ առաջ ես Հռոմում անձամբ տեսակցութիւն էի ունեցել թէ պրոպագանդայի ժողովի նախագահի և թէ կարդինալ Մէրրի դէլ Վալլիս հետ և յոյս կար յաջողելու։ Բայց որպէսզի մեր բողոքը հիմնաւոր լինէր, անհրաժեշտ էր ունենալ լատին եպիսկոպոսի գրութեան պատճէնը, ծանօթանալ նրա պատճառաբանութեան հետ։ Միթէ կարելի էր հիմնվել պարզ լրագրական լուրի կամ բերանացի հաղորդված տեղեկութեան վրա։ Չը նայելով իմ քանիցս կրկնած խնդիրքին հ. Գ. Նահապետեան չը կարողացաւ (?) կամ չուզեց տալ ինձ այդ գրութեան պատճէնը, երևի այն պատճառով որ այդ գրութեան մէջ եպիսկոպոսը ի միջի այլոց աննպաստ հայեացք էր յայտնում Տ. Պօղոսի՝ այսինքն Հ. Գ. Ն.-ի հօրեղբօր թեկնածութեան մասին, որը նա չէր ուզում երևան հանել.... Իսկ հիմա նա ասում է, թէ իմ առաջարկած բողոքի ձևն անօգուտ էր։ Ինքը ոչ այն ժամանակ ասաց, ոչ էլ այժմ է ասում, թէ ինչ այլ ձևով պէտք էր բողոքել, և դրա փոխարէն a posteriori թոյլ է տալիս իրան երկարօրէն քննադատել մի բան, որ իրօք տեղի չէ ունեցած։ Նա իր երևակայական ենթադրութիւնների մէջ այնքան առաջ է գնում, որ մինչև անգամ ապահով կերպով գուշակում է, թէ այդ բողոքագիրը իբր թէ մի ինչ-որ «յոռի ճանապարհով» (ո՞րն է արդեօք այդ «յոռի» ճանապարհը) պիտի գար Սարատովի եպիսկոպոսին ինչ պիտի անէր, տէր-Սարգսին ինչպէս պիտի վարվէր և ես ինչպէս պիտի շարժէի....։ Չը գիտեմ որքան աջող են նրա «ապահով» գուշակութիւնները լատին եպիսկոպոսի և տէր-Սարգիս վարդապետի անելիքների մասին, բայց իմ նկատմամբ կարող եմ բացարձակօրէն յայտնել, որ աւելի անհիմն և աւելի հիւանդ երևակայութիւն դժուար է նախատեսել....։

Հ. Գ. Ն. պնդում է, թէ ես՝ ինչ-որ գաղտնի նպատակով և ինչ-որ «նեղ կուսակցութեան» օգտին «ջերմ թղթակցութիւն եմ շարունակել... երբեմն ուղղակի՝ երբեմն անուղղակի՝ Կ. Պօլսի պատրիարքի և Հռոմի բարձրաստիճան հոգևորականութեան հետ»....։

Այստեղ արդէն Հ. Գ. Ն. զառանցում է։ Բացարձակապէս յայտնում եմ, որ ես, ոչ ուղղակի և ոչ անուղղակի, ոչ ջերմ և ոչ պաղ, ոչ մի թղթակցութիւն չեմ ունեցել «Կ. Պօլսի պատրիարքի և Հռոմի բարձրաստիճան հոգևորականութեան հետ», թէև եթէ ունենայի էլ ամենևին յանցանք չէի համարի այդ ինձ համար։ Եւ որպէսզի համոզվի Հ. Գ. Ն., թէ ես բոլորովին չեմ քաշվում իմ ասածի պատասխանատւութիւնն ընդունելուց, ես որոշել եմ իմ այս յօդուածից մի մի օրինակ ուղարկել Կ. Պօլսի պատրիարքին և Հռոմ, ընդգծելով առանձնապէս այս տողերը։ Յոյս ունիմ, թէ նա գոհ կը մնայ իմ այս հերքումից....։

Հ. Գ. Ն. խոստովանում է իր յօդուածում, թէ ինքը իր «կոլլեգա»-ներից կամ գոնէ ինձանից գաղտնի նամակներ է գրել գաւառական լիազօրներին զգուշացնելով նրանց ինչ-որ երևակայական «սպառնացող վտանգի» դէմ և ասում է, թէ «պ. Սարուխան Բաթում գնալով այնտեղ ծանօթացել էր իմ (Հ. Գ. Ն.-ի) նամակների բովանդակութեան հետ»։ Նա չարաչար սխալվում է։ Ես երբեք չեմ հետաքրքրվել լրտեսական հոտառութեամբ, թէ Հ. Գ. Ն. ո՞ւր, ո՞ւմ և ո՞րին ինչ նամակներ է գրում. առանձնապէս այս դէպքում, Բաթումում, ես ոչ հարցրել եմ և ոչ էլ «ծանօթացել» նրա որևէ նամակի հետ....։

Հ. Գ. Ն. անհաջին ճիգ է գործ դնում, չը խնայելով ոչ մի միջոց, հաւատացնելու համար իր ընթերցողներին, թէ ես ի սկզբանէ մի ինչ-որ երկդիմի դեր եմ կատարել, հակառակ եմ գնացել մեր ընդհանուր պետիցիայի որոշման, «սիրաշահելու համար իմ փափաքած թեկնածուն», որ իբր թէ տէր Սարգիս վ. Տէր-Աբրահամեանն է։ Ծիծաղելին այն է, որ այն միակ դէպքը, որ իբրև հաստատուն փաստ առաջ է բերում, որի համար նա իր մատն է կծել և Вотъ тебѣ է գոչել, նոյնպէս խեղաթիւրված է մինչև անճանաչելիութեան աստիճան։ Ճիշտ այդ դէպքը ապացոյց է, թէ ես բոլորովին և անկեղծ կերպով հաւատարիմ եմ եղել մեր տուած պետիցիային և ոչ թէ ընդհակառակը։ Պատմեմ բուն եղելութիւնը, և թող ընթերցողը նորից կարդայ Հ. Գ. Ն.-ի յօդուածի այդ մասը և համեմատէ։

Մարտ ամսում ես 2 անգամ ներկայացել եմ Փոխարքայի օգնական Սուլթան-Կրիմ-Գիրէյին մեր սեպհական գործով և խնդրել նրա աջակցութիւնը։ Տեղեկանալով նրանից, թէ Փոխարքան արդէն պաշտօնական կերպով մեր աղերսագիրը պաշտպանած է, ի միջի այլոց նաև տէր Պօղոս վ. Նահապետեանի թեկնածութիւնը, ես այդ մասին յայտնում եմ Հ. Գ. Ն.-ին։ Այդ միջոցին ես մի նամակ եմ ստանում Բաթումից, Տ. Սարգիս վ. Տէր-Աբրահամեանից, որի մէջ նա հաղորդում էր ինձ Հռոմից՝ Սապաղեան կաթողիկոսից ստացած մի նամակի բովանդակութիւնը, որտեղ կաթողիկոսը պատմում էր կարդինալ Մէրրի դէլ Վալի հետ իր ունեցած տեսակցութիւնը մեր հարցի մասին և ապա աւելացնում էր բառ առ բառ հետևեալը. «Ըստ մեր կարծեաց ամեն կուսակցութիւնները միանալով մի սիրտ և մի հոգի գործելու էք։ Գրեցէք մեզ Ձեր (Տէր-Աբրահամեանի) անունէն զատ ուրիշ երկու անուն ալ, որոնք ըստ Աստուծոյ և ըստ ներկայ պարագայից յարմար են այդ պաշտօնին, որպէս զի մենք ալ ս. Գահուն հետ ուղղակի բանակցելով, գուն գործենք յաջողեցնելու Ռուսիոյ հայ կաթողիկէից այս կենսական խնդիրը։ Զայս այսպէս ծանուցէք Ձեր ծանօթներուն և ընդհանուր կղերին»։ Կ. Պօլսի պատրիարք-կաթողիկոսի ահա այս առաջարկութեան մասին է, որ հայր Գաբրիէլ Նահապետեան քանան այնքան խոնարհութեամբ և փափկանկատութեամբ գրում է. «կարգադրութիւն մը, որ վանդալական աւերմունքներից աւելի սոսկալի և աւելի ցաւալի է»…։ Տէր Սարգսի այս նամակն ամբողջութեամբ տալիս եմ Հ. Գ. Ն.-ին կարդալու, և Հ. Գ. Ն., որ տէր Սարգսին համարում էր թէ իր և թէ առ հասարակ Վիեննայի Մխիթարեանների ոխերիմ թշնամի, այնտեղ կարդում է, որ տէր Սարգիս իր կողմից յարմար է համարում առաջարկել երկու ռուսահպատակ Մխիթարեան վարդապետներ, այն է հ. Դիոն Գազաոսեան և հ. Համ. Սափարեան, և ինքնաբերաբար խնդրում է ինձ, որ այս մասին խորհրդակցեմ հ. Գաբրիէլ Նահապետեանի հետ և մեր տեսութիւնը շուտով իմացնենք նրան։

Եթէ տէր Սարգիս և ես որևէ «յետին մտքեր» ունենայինք, ինչպէս անիրաւաբար կասկածում է Հ. Գ. Ն., ամենևին չէինք հաղորդի նրան այս ամենն և կը գործէինք նրանից անկախ և նրա հօրեղբօր թեկնածութեան հակառակ։ Ես չը տեսայ Հ. Գ. Ն.-ի իր մատը կծելը, բայց նկատեցի, որ նա չափազանց այլայլված էր դրանից, նախ որովհետև այս անգամ էլ, ինչպէս սրանից առաջ, ոչ ոք գոնէ ձևի համար նրա սեփական թեկնածութիւնը չէր առաջարկում, երկրորդ որ կասկածում էր, թէ որովհետև այդ երկու Մխիթարեան վարդապետների կից մնում էր նաև Տէր-Աբրահամեանի անունը, կարող էր պատահել, որ Վատիկանը նախապատւութիւն տար Տէր-Աբրահամեանին, իսկ այդ՝ ուղղակի մահացու հարուած կը լինէր Հ. Գ. Ն.-ի համար.... Որպէսզի որևէ կասկած չը տամ կողմնապահութեան մասին, ես հրաւիրեցի մեր բիւրօյի միւս 2 անդամներին ևս խորհրդակցելու, և միաձայն որոշեցինք հաւատարիմ մնալ մեր տուած պետիցիային այն է՝ տէր-Պօղոս վարդապետի միակ թեկնածութեանը։ Այդ մասին էլ ես պատասխանեցի Բաթում Տէր-Աբրահամեանին։ Որպէսզի աւելի ոյժ տուլի գործին, ես ամբողջ գիշեր աշխատելով թարգմանեցի մեր ընդարձակ պետիցիան, մի երկար և պատճառաբանեալ նամակ գրեցի բիւրոյի կողմից կաթողիկոսին, որ այդ ժամանակ դեռ Հռոմումն էր, խնդրելով որ պաշտպանէ Պօղոս վարդապետ Նահապետեանի թեկնածութիւնը, և մի մասնաւոր նամակ էլ իմ ծանօթ մի վարդապետի, որ այդ թղթերը յանձնէ կաթողիկոսին։ Նորից հրաւիրեցի բիւրոյի անդամներին, որոնք բոլորը կարդացին, հաւանեցան, ստորագրեցին, որոնց մէջ նաև Հ. Գ. Ն., և ուղարկեցի Հռոմ։

Այդ էլ բաւական չէ. ես անձամբ գնացի Բաթում, տեսնուեցի Տէր-Աբրահամեանի հետ, նրա նախագահութեամբ ընդհանուր ժողով հրաւիրեցինք զուտ Արդուինի թեմի լիազօրներից և այլ ազդեցիկ անձերից, և այնտեղ իմ առաջարկութեամբ որոշվեց հաւատարիմ մնալ տէր-Պօղոս վարդապետ Նահապետեանի թեկնածութեան։ Եւ երբ մենք այս բոլորն անում էինք, անսալով կաթողիկոսի յորդորին «մի սիրտ մի հոգի գործել», անդին հ. Գաբրիէլ Նահապետեան, ինչպէս ինքն անձամբ խոստովանում է «Մշակում», զբաղված է եղել ծածուկ նամակներ գրելով աջ ու ձախ և գրգռելով ժողովուրդը Տէր-Աբրահամեանի և իմ դէմ, իբրև նրա հօրեղբօր հակառակորդների...։ Ահա այստեղ է, նոյն Հ. Գ. Ն.-ի վայելուչ ոճով խօսելով, որ իսկապէս ընկնում է «մաշած դիմակը» և «պատրաստած գառան մորթի տակից երևում է նենգաւորական ագուէսի մուշտակը»...։

Բայց շարունակենք։

Շատ բնորոշ է Հ. Գ. Ն.-ի վերաբերմունքը դէպի Կ. Պօլսի մեր կաթողիկոսը։ Նա գրում է. «Ամբողջ Կովկասի հայ-կաթոլիկ ժողովուրդը ոչինչ չը գիտէր և ոչինչ յուսալիք չունէր Կ. Պօլսի պատրիարքէն և նրա գնալը Հռոմ ոչ մի առնչութիւն չէր կարող ունենալ Կովկասի հայ-կաթոլիկաց գործերի հետ»։ Ես պարզապէս չեմ իմանում ինչ անուն տալ հ. Գաբ. Նահապետեանի այս վարմունքին։ Ի՞նչպէս է կարողանում նա այս աստիճան կեղծել, քանի որ շատ լաւ գիտէ, թէ Կովկասի հայ-կաթոլիկ ժողովրդի մի ստուար մասը, այն է ամբողջ Արդուինի թեմը (Կարս, Բաթում, Արդուին, Արտանուշ, Արդահան, Օլթի և այլն) դեռ ևս գտնվում են Կ. Պօլսի պատրիարքի հոգևոր իրաւասութեան տակ և չեն ենթարկված Սարատովի լատին եպիսկոպոսին։ Եթէ մի ոմն Հ. Գ. Ն. չէ ուզում ճանաչել Կ. Պօլսի պատրիարքի այդ իրաւասութիւնը, այդ չէ նշանակում, թէ պատրիարքը ինքնին անտարբեր պիտի մնար իր հօտի հոգևոր պիտոյքին և Հռոմում եղած ժամանակ պիտի չաշխատէր վերջ դնել այն անկարգ դրութեան, որ տիրում է այժմ Կովկասի կաթոլիկ հայոց եկեղեցական գործերում։ Հ. Գ. Ն.-ի այդ համարձակ «չը կարէր»-ը չափազանց ծիծաղելի կը լինէր, եթէ չափազանց յանդուգն չը լինէր մի հայ-կաթոլիկ քահանայի կողմից։

Իր տարօրինակ ընդդիմախօսութեանը մէջ Հ. Գ. Ն. այնքան շփոթ դիրք է ընդունել, որ մոռանալով հանդերձ Կ. Պօլսի պատրիարքին «առնչութեան» իրաւունքը, նա միևնոյն ժամանակ ինձ մեղադրում է, թէ ինչու չեմ յայտնել ժամանակին՝ պատրիարքի Հռոմ գնալը, որպէս զի «մի ուրիշ պետիցիա կազմէինք և ուղարկէինք Հռոմ կաթողիկոսին և խնդրէինք, որ նա իր բարձր հեղինակութեամբ պաշտպանէր և յարգելի անէր առ ս. Աթոռին, մեր անցեալ տարվայ Փոխարքային տուած պետիցիայի բովանդակութիւնը լրիւ»։ Հ. Գ. Ն.-ի անպարկեշտութիւնը այն աստիճանի է հասնում, որ այս պարագայում էլ կեղծում է և չի յիշում իր յօդուածում, թէ իրօք այդպիսի մի պետիցիա՝ գոնէ Թիֆլիսում իմ առաջարկութեամբ արդէն կազմված և ուղարկված է կաթողիկոսին Հռոմում։

Գանք այժմ Հ. Գ. Ն.-ի յօդուածի մի այլ կէտին, որը նա յիշել էր իր առաջին յօդուածում «Մշակի» մէջ և որը այժմ էլ շարունակ կրկնում է և բացատրութիւն պահանջում։ Այդ կէտն է՝ իմ նախորդ մի յօդուածում գրածը թէ՝ հայ-կաթոլիկների «եկեղեցական-վարչական հարցի լուծումը ուշանում է զանազան աննպաստ պարագաների շնորհիւ»։ Այժմ ես այդ էլ կը բացատրեմ, որ Հ. Գ. Ն. բոլորովին հանգստանայ։ Ահաւասիկ։

Մենք մեր պետիցիայի մէջ «Թեմական կառավարչի» պաշտօնի համար առաջարկել էինք տէր Պօղ. վ. Նահապետեանին, բայց նրա հաստատութեան համար մեր ընտրութիւնը բաւական չէր։ Այս հարցում երկու աննպաստ հանգամանք կայ, որոնք իսկապէս այնպէս կապված են միմեանց հետ, որ կարող են մի ընդհանուր պատճառի վրա հիմնվել։ 1903-ի կայսերական կարգադրութեամբ «հայ-կաթոլիկ թեմի կառավարիչը» նշանակվում է Վատիկանի և ռուս կառավարութեան՝ յանձին Ներքին գործերի մինիստրութեան՝ փոխադարձ համաձայնութեամբ։ Մինիստրութիւնն էլ իր կողմից պաշտօնական նամակով յանձնած է Սարատովի լատին եպիսկոպոսին, իբրև Ախալցխայի թեմի հայ-կաթոլիկների հոգևոր բարձր իշխանութեան, որ նա իր կողմից առաջարկէ մի յարմար անձ, «հայածէս և հայազգի կաթոլիկ քահանաներից», այդ պաշտօնի համար։ Բնական երևոյթին, եթէ մինչև անգամ ռուս կառավարութիւնը, առանց լատին եպիսկոպոսին հարցնելու, ուղղակի առաջարկէ մէկին, վատիկանը պիտի չը հաստատէ առանց կանխաւ այդ վարդապետի մասին տեղական լատին հոգևոր իշխանութեան կարծիքն իմանալու։

Ահա այս կնճռոտ դրութիւնից մի անգամ ընդմիշտ ազատվելու համար է, որ ես մինչև անգամ թէ խօսքով և թէ գրով պնդել եմ, մինչև իսկ անձամբ Հռոմ գնացել, որ Կովկասի հայ-կաթոլիկները պէտք է ունենան իրանց սեփական եպիսկոպոսը, անկախ լատինական վարչութիւնից։ Արդ, Սարատովի եպիսկոպոսը, ինչպէս երևում է բոլոր նշաններից, չէ ուզում ընդունել տէր-Պօղոսի թեկնածութիւնը, որովհետև նախ՝ տէր-Պօղոս վ. Նահապետեան 85 տարին անցած մի ծերունի է, թէև ասում են դեռ մարմնով առողջ, երկրորդ և մանաւանդ՝ տէր-Պօղոս վարդապետ՝ հօրեղբայրն է հ. Գաբրիէլ Նահապետեանի և ենթադրվում է, որ նա՝ իր զառամեալ հասակի պատճառով պիտի ենթարկված իր եղբօրորդու ազդեցութեան. իսկ այս եղբօրորդին, շեշտում եմ, հ. Գաբրիէլ Նահապետեան, բացարձակօրէն ոչ մի վստահութիւն չէ վայելում ոչ տեղական հոգևոր իշխանութեան մօտ, ոչ էլ Հռոմում։ Ուրեմն ամեն ինչ բերում է մեզ այն եզրակացութեան, որ իմ յիշած «աննպաստ պարագաները» մի ընդհանուր հիմք ունեն և այդ հիմքն ու իրական խոչընդոտն էլ հ. Գաբր. Նահապետեանի անձնաւորութիւնն է։ A bon entendeur salut!

Ես դեռ կարող էի երկար շարունակել Հ. Գ. Ն.-ի յօդուածի քննութիւնը, բայց կարծում եմ, թէ այսքանն էլ պարզ է ընթերցող հայ-կաթոլիկ հասարակութեանը գաղափար տալու համար գործի դրութեան մասին։ Գալով Հ. Գ. Ն.-ին, փափագելի է, որ եթէ նա դարձեալ լրագրական ասպարէզ իջնէ այս հարցի առիթով, եթէ չէ կարող ձեռք քաշել խեղաթիւրումներից, գոնէ զգուշանայ այնպիսի բացատրութիւններից, ինչպիսին են՝ «վանդալական աւերմունքից աւելի սոսկալի» (կաթողիկոսի կարգադրութեան մասին), հին ուրուական (Տէր Աբրահամեանի հասցէին), «եկեղեցական ագուէս» (ո՞վ է արդեօք) և այլ նմանօրինակ խօսքերից, որոնք բոլորովին անպատշաճ են կղերականի՝ այն էլ իր «Մխիթարեան»-ութիւնովը պարծեցող հոգևորականի գրչին...։

Սարուխան

«ԱԼԻՔԻ» ՄԱՆԵՕՎՐՆԵՐԸ

(Նամակ խմբագրութեան)

Malo periculosam libertatem!

«Ալիքի» ղեկավարները, իբրև արդի դաշնակցական բիւրոկրատիայի մտաւոր-բարոյական կարողութեան ներկայացուցիչներ, բաւական ճիշտ գաղափար են տալիս այն տրագիքական դրութեան մասին, որի մէջ գտնվում է հազար ու մի նպատակ դնող և ոչ մէկին հասնելու ճանապարհ չիմացող «Դաշնակցութիւն» կոչված ընկերակցութիւնը։ Ցայսօր այդ ընկերակցութեան օրգաններում չը կարդացինք մի նոր խօսք, մի ինքնուրոյն գաղափար, մի հաստատ աշխարհայեացք, մի հարցի լուրջ քննութիւն։ Միայն այն է աչքի ընկնում, որ մարդիկ օրիգինալ երևալու համար արուեստական միջոցներով բզբզում են, բորբոքում իրանց «վէրքերը» և գրգռված, սարսափելի ըմբոստ ու ցասկոտ ժեստեր անում, ջղեր քայքայող կատաղի արձակում։ Այլապէս ի՞նչ անեն «Ալիքի» ղեկավարները, երբ «Դաշնակցութիւն» կոչված ընկերակցութիւնը մի նոր Նոյեան տապան է ներկայացնում իր խառնիճաղանճ կազմով։ Ինքներդ դատէք. դաշնակցական «զինուորները», հաւատարիմ հին ուխտին, դէպի Ցաճկաստան են ձգտում. միւս կողմից նոր հովերով բանված դաշնակցական «սօցիալիստները» ուզում են ամբողջապէս նուիրվել դասակարգային կռիւներին, պրօֆեսիօնալ կուսակցական միութիւններ բազմացնել. երրորդ կողմից դաշնակցական փորձված բիւրոկրատները չափազանց սիրել են իշխել և կուզէին այժմ բազմել վեհարանի, առաջնորդարանների և հոգաբարձական խորհրդարանների փափուկ բազկաթոռներում և ազգային-եկեղեցական խնդիրներ կարգադրել, ազգօգուտ հրահանգներ մշակել և... ֆավօրիտիզմ բանեցնել իրանց թայֆային պատկանողների նկատմամբ, ինչպէս այդ վայել է ազատամիտների և դեմոկրատամիտների կոմֆորտը սիրող իսկական բիւրոկրատներին։

Սակայն դրանց դժբախտութիւնից հայկական հօրիզոնի վրա երևացել են աւելի ծայրայեղ ջահիլներ՝ «Կեանք», «Կայծ» և «Աշխատանք», որոնք չափազանց անհերես են ու չարաճճի և իրանց մշտական յարձակումներով և անողորմ մերկացումներով խանգարում են, որ դաշնակցական բիւրոկրատիայի անխռովականութիւնն ու գերիշխանութիւնը ամրանայ հայ ժողովրդի մէջ։ Այդ խիզախ Դաւիթներին Գողիաթը սկզբում փորձեց վախեցնել, գործ դնելով դաշնակցական արսէնալում եղած զէնքերը՝ խուզարկութիւն, բոյկոտ, մահակ և այլն։ Բայց չարաճճի ջահիլները Գողիաթին լեզու ցոյց տուին և ամաչեցրին, ասելով թէ վայել չէ այդպիսի մեծ «յեղափոխականներին» այդպիսի ընտիր միջոցների դիմելը։ Եւ մեր դաշնակցականները գոնէ իրանց «Ալիքում» ստիպված էին ինքնապաշտպանական նոր միջոց հնարել. և նրանք գտան փրկարար մանեօվրը։ Չափազանց յաճախ դիմելով այդ մանեօվրներին, նրանք բնականաբար սիրել են ուրիշների մէջ էլ սեփական հոգին տեսնել։ Հոգեբանական ինքնադիտողութեան մեթոդ է այդ կոչվում։ Դրանք գտել են («Ալիք» № 59), որ Յովհանեան չարաքասիկ հոգաբարձութեան quasi-ապօրինութիւնը ինձ յայտնի էր մինչև յունիսի 15-ը, և ես մանեօվր (?) եմ անում, այլ բան պնդելով։ Եւ բերում են իբրև ապացոյց «Մշակի» մէջ մայիսի 28-ին տպված ինչ-որ լուր Մողնու ծխականների ժողովի որոշման մասին, որ պէտք է ի կատար ածէր այդ ժողովի նախագահը։ Արդ, ես չեմ դիմում «Ալիքի» ղեկավարներին, այլ ընթերցողի առողջամտութեանը. միթէ բնական չէ իւրաքանչիւր մարդու համար, մանաւանդ ով տասնեակ թերթեր է աչքի անցնում, ուշադրութիւն դարձնել միայն այն լուրերի վրա, որոնք որոշ ժամանակում զբաղեցնում են նրա միտքը։ Բնական չէ՞ մեր օրերում, որ իւրաքանչիւր զբաղված մարդ շաբաթներով ռուսերէն հեռագրներից բացի ուրիշ բան չի կարդում։ Ինձ այժմ էլ յայտնի չէ, օրինակ, թէ ի՞նչ արաւ «Մողնու ծխականների ժողովի նախագահը» իրան յանձնված որոշման հետ։ Բաւական է! Այս չնչին հարցում պարզ է, որ մեր «յեղափոխական» «Ալիքը» արդէն ընկել է կլեաուզների, խծբծանքների և ինտրիգների յորձանքի մէջ։ Ես այդ պղտոր ալիքներում լողացողը չեմ և գիտեմ, թէ ինչ է նշանակում ձեզպէսների բերանում «ժողովուրդ» խօսքը։ Կան մարդիկ, որոնք կլանում են ուղտերը և քամում մժղուկները... Ես շատ լաւ գիտեմ, պարոններ, որ դուք ուզում էք ձեր ընկերակցութեան ձեռքը գցել «ազգային-եկեղեցական» բոլոր գործերը և բռնել նախկին կղերական բիւրոկրատիայի տեղը, միայն ծածկվելով մի քանի մեծ-մեծ խօսքերով...

Բարի վայելում! Ես ձեր մրցակիցը չեմ այդ զարմանալի «յեղափոխական» էվօլիւցիայի մէջ. դուք ներկայումս ինձ համար նոյն նշանակութիւնը ունիք, ինչ կղերականութիւնը ձեզնից առաջ։ Տարբերութիւնը այն է, որ նրանք իրանց քմահաճոյքները և ֆավօրիտիզմը հիմնում էին անպէտք և հնացած օրէնքների վրա, իսկ դուք՝ կոպիտ, բռնի ոյժի վրա, որ անցել է ձեր ձեռքը շնորհիւ ռուս ապիկար վարչութեան ստեղծած աննորմալ կարգերի մեր երկրում։ Ինքնապաշտպանութիւնն էլ ձեր ձեռքում դառաւ հայի ինքնասպանութիւն։ Այդ էլ մանեօվր էր։ Ժողովրդի ազատութեան դէմ ձեր արածների ապացոյցնե՞ր էք ուզում։ —Կարդացէք այն անթիւ փաստերը, որ արձանագրված են ձախակողմեան բոլոր նոր թերթերում։ Ձեր ինչ փոյթ. պաքթէք, շահագործէք ամեն ինչ ի փառս սուրբ դաշնակցութեան դիկտատուրայի։

Բարեհաճեցէք մի քանի խօսք էլ լսել, ազգային բիւրոկրատներ։ Այո, ես անվայել եմ համարում մամուլի մէջ հասարակութիւնը զբաղեցնել ձեր ինսինուացիաների քննութեամբ։ Ժամանակ է վերջ դնել այն գրական ապականված բարքերին, որ խոր արմատ են գցել մեզանում շնորհիւ զանազան «ձկնորսների» և տիրացու պարոնների—«Հաջի Բաբաների» քաղաքակիրթ գրականութեան մէջ... Անձնական հաշիւները մաքրելու այլ տեղեր կան և ոչ մամուլի սիւնակները։ Ինչ վերաբերում է ձեր «սպանիչ» ակնարկին, թէ ես «առ. [illegible] չեմ պատասխանում, երբ նեղն եմ ընկնում»— միայն անհասկանալի, որովհետև, եթէ մամուլի մէջ է այդ «երբը», ես պարզեցի, իսկ մամուլից դուրս—կեանքի մէջ—երկու դէպքում ես չեմ պատասխանում. առաջինը՝ երբ համոզվում եմ, որ դիմացիս կանգնածը մի թշուառ խելագար, իսկական փսիխոպատ է, երկրորդ՝ երբ տեսնում եմ, որ գործ ունիմ մի կատաղած սրիկայի հետ։ Գուցէ դուք, իբրև ժամանակակից դաշնակցականներ, առանձին սէր ունէք տուր ու դմփոցների, բռնցամարտի... Ճաշակի բան է։ Այն էլ գիտեմ, որ դուք կուլտուրութիւնը չէք տարբերում ղուլդուրութիւնից *)... Այդ էլ հասկացողութեան բան է։

Adieu!

Լեոն Սարգսեանց

10 յուլիսի 1906 թ.

ԴԻԼԻՋԱՆԸ ԻԲՐԵՒ ԱՄԱՐԱՆՈՑ

Այս երկրորդ ամառն է, ինչ, որ Դիլիջանը զոհ է գնում հայ-թուրքական ընդհարումների առիթով տարածված վախին։ Նախկին տարիների ամարանոցային եռուն կեանքը այլ ևս չը կայ Դիլիջանում. Թէև յաճախորդների թիւը հետզհետէ աւելանում է, բայց և այնպէս այն չէ ինչ որ իրաւունք ունէր սպասելու նրա սքանչելի բնութիւնը։ Այդ բոլորի պատճառը ի հարկէ հայ-թուրքական ընդհարումներն մի վախ, որ Դիլիջանի վերաբերմամբ անտեղի է ու գոյութիւն չէ ունեցել. Նախ որ Դիլիջանի դիրքը լաւ է, ազգաբնակութիւնը շատ է, զուտ հայկական, և երկրորդ որ նա շրջապատված է հայկական գիւղերով։

Ինչ մնում է Դիլիջան տանող ճանապարհին, նա անցնում է հայկական գիւղերի միջով։ Ղարաքիլիսան կայարանից մինչև Դիլիջան, որ 38 վերստ է, ոչ մի վտանգ չէ ունեցել և չը կայ էլ։ Դիլիջանը թէև գտնվում է Ղազախի գաւառում, բայց և այնպէս ձմեռ, Ղազախում տեղի ունեցած հայ-թուրքական ընդհարումների ժամանակ, նա ազատ մնաց այդ ընդհարումներից, որովհետև ոչ ոք չէր կարող ռիսկ անել Դիլիջանի վրա յարձակվելու, մանաւանդ որ զօրք կայ, և ամառներն էլ տեղափոխվում են այնտեղ Ղազախի գաւառապետը և ոստիկանութիւնը։

Ահա աչքի առաջ ունենալով յիշեալ հանգամանքները՝ անհիմն են Դիլիջանի անապահովութեան ու վտանգաւորութեան մասին տարածված լուրերը։

Այդ տեսակ լուրերի տարածվելուն քիչ չեն նպաստում և մի քանի ղարաքիլիսացիներ։ Վերջերս նրանք այդ ձևով են վարվել մի ռուս ուսուցչի հետ, որը միշտ ամարանոց է գալիս Դիլիջան։ Նրան հաւատացնում են, որ ճանապարհը մինչև Դիլիջան շատ վտանգաւոր է։ Պարոնը, հաւատալով, վճռում է մնալ Ղարաքիլիսայում, բայց մի քանի օր ապրելով և հարց ու փորձ անելով իմանում է, որ հնարովի են եղել այդ լուրերը, ոչ մի վտանգ չը կայ, և նորից գալիս է Դիլիջան։

Մեր ամարանոցների մէջ Դիլիջանը աչքի ընկնող տեղ է գրաւում։ Աւելորդ կը լինի գովել նրա հիանալի օդն ու ջուրը, նրա գեղեցիկ բնութիւնը, որ միշտ էլ գրաւել է դէպի ինքը ամարանոց գնացողների ահագին տոկոս։

Նրանք, որոնք ամարանոց գնալու նպատակ ունեն, չը պէտք է մոռանան Դիլիջանը, ուր, համեմատելով ուրիշ տեղերի հետ, թէ կեանքն է էժան, թէ բնակարանները, թէ կլիման հիանալի և թէ տեղը ապահով։ Խորհուրդ ենք տալիս գալ ցանկացողներին ուշադրութիւն չը դարձնել տարածված լուրերի վրա, որոնք, շեշտում եմ, անհիմն են ու հնարովի։

Կ. Թադէոսեան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Յուլիսի 8-ին

Գործադուլ անելը, որպէս մի տարափոխիկ հիւանդութիւն, կատարելապէս սովորական երևոյթների շարքն է անցել. դեռ մի դասակարգի գործադուլը չը վերջացած, միւսն է սկսվում, և այդպէս շարունակ։ Մի երկու-երեք օր է, ինչ վերջ տրվեց գինեվաճառների և հասարակ (ոչ հիւրանոցների) ճաշարանների ծառայողների գործադուլին, որով ըստ ինքեան շատ աննշան պահանջներ են ներկայացրված ծառայողների կողմից, և ահա սկսվեց դարբինների և տապաճագործների գործաւորների գործադուլը. պահանջները գրեթէ միևնոյն են՝ օրավարձի աւելացում, ժամերի կրճատում, սենեակ, բաղնիք և այլն։

Ամենքինը լաւ, բայց դարբինների դրութիւնը այնքան էլ նախանձելի չէ. գրեթէ մեծ մասը չքաւոր և հազիւ ապրող մարդիկ են, ի հարկէ, բացառութիւն են կազմում այնպիսիները, որոնք թէ մի րուբլի արժողութեան գործի համար 4—5 րուբլի են ստանում և թէ կեանքի մեծ մասը հարբած են լինում։

Գործադուլ են արել նաև տեղիս «Черн. Вѣстникъ» լրագրի հատով ցրիչները, ծախողները՝ գլխաւորապէս նրա համար, որ խմբագրութիւնը ամեն մի դիմողի համարներ է տալիս ծախելու համար։ Տարօրինակը այն է, որ ամեն մի դասակարգ մի կողմից ազատութեան մասին է խօսում, իսկ միւս կողմից մօնօպօլիական ձև տալիս իր վաստակին, օրինակ, աղբ դէն-ածող «տաճկաչիները» անցեալները թէ գործադուլ արին և 25 կոպէկ «կանէքը» 50 կոպ. դարձրին և թէ իրանց մէջ վճիռ են կայացրել, որ ոչ ոք իրաւունք չունենայ մի նոր տաճկա սարքելու և նոյն գործով զբաղվելու։ Նոյնն են արել և դրօգաչիները և այլք։ Երևի նա էլ է բուրժուա, ով հնարաւորութիւն ունի մի ձի և մի տաճկա կամ դրօգ գնելու՝ աղբ, կամ ապրանք կրելու համար։

Ահա քանիերորդ անգամն է, ինչ ամեն կիրակի օր տեղիս քաղաքային դումայի շէնքի մէջ ընդհանուր ժողովներ են տեղի ունենում՝ այստեղի գործադուլաւորների կողմից. շատ տեսակ հարցեր են շօշափվում, բայց դեռ ես գործնականապէս ոչ մի շօշափելի օգուտ տեղի չէ ունեցել այդ խեղճերի վիճակի վերաբերմամբ. և չէ էլ կարող տեղի ունենալ, քանի որ ամեն ինչ առ այժմ կատարվում է միայն և միայն ճոխ բառերի կրկնութեամբ, այսինքն խօսել և խօսալով միայն։ Խօսելու դար է. երևի դրան կը յաջորդէ և գործելը։

Այսպէս թէ այնպէս գործարանների բացվելու լուրը տարածվելով, գնալով մեծ ծաւալ է ստանում եկւոր գործաւորների թիւը, որոնցից շատ քիչ տոկոսն է արժանանում գործ գտնելու։ Շատերը վերջին ծայր թշուառութեան հասնելով դիմում են գեներալ նահանգապետին, յետ վերադառնալու համար երկաթ ուղու ձրի տոմսակ ստանում և վերադառնում հայրենիք։ Այդպիսիների մեծ մասը Երևանի նահանգի հայերից են լինում։ Եւ այդպէս՝ մի կողմից արևն է կաթեցնում խեղճ գիւղացու սրտից, իսկ միւս կողմից շահեցնըվում նա...

Ինչպէս լսեցինք, անցեալ յունիսին քաղաքիս մօտ զինուորների կողմից աբխազներին հասցրած վնասի համար վճռված է 18,000 րուբլի տալ նրանց, որից 3000 արդէն բաժանվել է և 15,000 պէտք է բաժանեն մօտ ժամանակներս։

Այս րօպէիս լսեցինք, որ տեղիս Բենիաթօղլու ծխախոտի գործարանի բանւորները գործադուլ են արել. պահանջները մօտ 13 են։

Գ. Գրիգորեանց

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, յուլիսի 11-ին

Յարգելի խմբագրութիւն, խնդրում եմ պատուարժան «Մշակ»-ի մօտակայ համարներից մէկում տեղ տալ հետևեալ երկտողիս։

Օգտվելով այն հանգամանքից, որ անգլիացի Սիդ. Ստօկկը, որի հետ ես բաւական երկար ժամանակից ի վեր մորթիի առևտրական գործեր ունէի, յանկարծակի կերպով անյայտացաւ ու մինչև օրս էլ չէ գտնված նրա հետքը, առևտրական մրցակիցներս սկսել են վաճառականական շրջաններում լուրեր են տարածել, թէ ես Ստօկկին պարտ եմ մնացել 4000 (չորս հազար) րուբլի ու չեմ վճարել։ Այդ լուրերը, ի հարկէ, տարածում են իմ առևտրական վարկը գցելու համար և մասամբ հասնում են իրանց նպատակին։ Ուստի ներկայիս յայտնում եմ ինձ հետ գործ ունեցող առևտրականներին և վաճառականներին, որ ես անյայտ կերպով կորած Ստօկկին, կամ աւելի ճիշտ է ասել Պօլսում գործեր վարող Վեսսօլ և ընկերութիւն յայտնի անգլիական ֆիրմային, որի ներկայացուցիչն էր այստեղ Ստօկկը, պարտ էի ոչ թէ 4000, այլ 7500 րուբլի։ Սակայն Ստօկկի անյայտանալուց յետոյ, նրա հաշիւները քննելու համար, տեղս եկած այդ նոյն ֆիրմայի մի ուրիշ, աւելի բարձր պաշտօն ունեցող ներկայացուցիչ նոյնպէս անգլիացի Պերսի Վէլսի հետ, միջնորդ դատարանի միջոցով, ամբողջ հաշիւներս մաքրել եմ, ունեցած պարտքս լրիվին վճարել և պ. Վէլսից ստացել թէ ստացագիր և թէ Ստօկկի հետ ունեցած բոլոր պայմանագրերը։ Այդ մասին կարող են վկայել միջնորդ դատարանի անդամներ պ. պ. անգլ. վաճառական Լէօնիդ Վայս, անգլ. գործարանատէր Իօսիֆ Րուքս ու Սըմբատ Ջանփոլադեանց։ Բացի դրանից ես պատրաստ եմ այդ խնդրով հետաքրքրողներին կամ կասկածողներին միշտ ներկայացնել թէ միջնորդ դատարանի կայացրած վճռի պատճէնը և թէ պ. Պերսի Վէլսի տուած ստացագիրը։

Խորին յարգանօք՝

Բարունակ Կաղնեան

—

Թիֆլիս, յուլիսի 11-ին

Ինչպէս յայտնի է, Զանգեզուրի յեղափոխական խմբերի մէջ տեղի են ունեցել գժտութիւններ։ Ամսիս 8-ին Գորիսից հեռագրով յայտնում են, որ «դաշնակցականները յարձակվել են մի խումբ հնչակեան զինուորների վրա, սպանել են չորսին՝ — Գրիգորին, Ամբօյին, Սմբաթին և Սայեադին, իսկ ծանր, մերձ ի մահ վիրաւորել են Պետրոսին, Սարգսին և Արշակին։ Կոտորածն էլ շարունակվում է»։

Այս ցաւալի լուրը հաղորդելով՝ հարցնում ենք.—Երբ պէտք է վերջ լինի այս եղբայրասպանութեանը, ինչո՞ւ են մեր երիտասարդները ուրախացնում մեզ շրջապատող թշնամիներին։

Մենք այս երկտողով ցաւալի պատահած դէպքը հաղորդում ենք և թողնում ենք հայ հասարակութեանը դատել այս մասին*)։

Առաքել

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻՐ

Շուշի, 12 յուլիսի, 7 ժամ երեկոյեան.

Մենք հեռագրել էինք, որ մի հայի մորթել էին Գօլօշչապօվի տան մօտ։

Երբ գալիս են քննիչը, քաղաքագլուխը, խաղաղարար կօմիսիայի անդամները և ոստիկանութիւնը դիակի տեղը քննութիւն կատարելու, այդ ժամանակ թուրքերը համազարկեր են տալիս դէպի հայոց թաղը և դէպի քննիչները։ Գնդակներից մի քանիսը ընկնում են Գօլօշչապօվի տան մէջը։

Քննիչները թողնում հեռանում են։

Տիրում է սարսափ։

Գօլօշչապօվը կարգադրում է ռմբակոծել թուրքերի թաղը։

Թէ ինչ աւերումներ են կատարվել թուրքերի մասում և որքան մարդ վնասվել՝ յայտնի չէ։

Սպանված են 2 ռուս զինուոր, 2 հայ. վիրաւորված են 1 ռուս զինուոր, 2 հայ։

Հրացանաձգութիւնը երեկոյեան շարունակւում էր։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Գանձակից հեռագրում են, որ երեկ, յուլիսի 12-ին, առաւօտեան ժամը 9-ին ատրճանակի հարուածով սպանված է ժանդարմների ռոտմիստր Րիտչեվը։

—

Շօրապանի գաւառապետը զեկուցանում է, որ մօտ օրերս մի անյայտ չարագործ մտնելով Գիլիմսկի կուսանաց վանքի բակը՝ սկսեց կոտրել վանքի եկեղեցու կողպէքը։ Կոյսերը ձայնը լսելով աղմուկ բարձրացրին, և չարագործը փախաւ, անկարող լինելով իրագործել իր մտադրութիւնը։

—

Թիֆլիզի «Kaukasische Post» գերմանական շաբաթաթերթի չորրորդ համարում գերմաներէն են թարգմանված Աղեքսանդր Ծատուրեանի «Մեզաւորը» և «Հայ գրողի աղօթք» վերնագրով երկու բանաստեղծութիւնները, որոնց հետևում է և բանաստեղծի համառօտ կենսագրութիւնը։ Այդ բանաստեղծութիւնները զետեղված են շաբաթաթերթի «Գրականութիւն և գեղարուեստ» կոչված բաժնում։

Միևնոյն համարում պ. Արտուր Լայստը մեծ համակրանքով է խօսում Վեհափառ Հայրիկի վերջին երեք կոնդակների մասին, որոնք ապահովում են հայ-լուսաւորչական եկեղեցու լայն սահմանադրութիւնը և հայ իգական սեռի ընտրողական հաւասար իրաւունք ունենալը։ Շաբաթաթերթը յարմար առիթից օգտվելով իր խորին յարգանքի զգացմունքն է արտայայտում Վեհափառ Հայրիկի անձնաւորութեան վերաբերմամբ և յոյս է յայտնում, որ հայ ժողովուրդը նպատակայարմար կերպով կօգտվի ռեֆօրմներից, որ իր եկեղեցու արժանաւոր Պետը շնորհել է նրան։

Շաբաթաթերթը խոստանում է մօտ ապագայում մի առանձին մանրամասն յօդուած նուիրել հայ եկեղեցու սահմանադրութեան և նրա մեծ նշանակութեան մասին։

—

Բագուի նահանգապետը ներկայացրեց Փոխարքային Բագուի քաղաքային վարչութեան կողմից մի միջնորդութիւն, որով վարչութիւնը խնդրում է տալ Բագուի ժամանակաւոր գեն.-նահանգապետ Ֆադէևին Բագու քաղաքի պատուաւոր անդամի կոչումը։ (R.)

—

Շարուր-Դարալագեազ գաւառի հայ գիւղացիները որոշել են կաթողիկոսի կողմից հրաւիրվող ընդհանուր հայկական կենտրոնական պատգամաւորական ժողովի համար մեկնող իրանց պատգամաւորին պարտաւորեցնել, որ վերջինս վերոյիշեալ ժողովին զեկուցանէր 1) բանալ Երևանում մանկավարժական գիւղատնտեսական դպրոց. 2) որպէսզի այդ գաւառի ժողովրդական դպրոցները արտաքին կողմից օժանդակութիւն ստանան, քանի որ ազգաբնակութիւնը ոչ մի հնարաւորութիւն չունի ներկայումս պահել իր դպրոցները, որովհետև, շնորհիւ հայ-թուրքական ընդհարումների, նրանք ընկել են ամենախղճալի նիւթական դրութեան մէջ և 3) որպէս զի Էջմիածնի համագումարը որոշէ, որ այսուհետև հոգևոր պաշտօններ կարող են գրաւել միայն այն անձինք, որոնք ունեն առ նուազն միջնակարգ կրթական ցենզ։

—

Երեքշաբթի օր, յուլիսի 11-ին, ցերեկվայ ժամի 12-ին «Ալիք» լրագրի խմբագրատունը ենթարկվեց խուզարկութեան։ Ոչ մի կասկածելի բան չը գտնվեց։ Խուզարկողները ցուցակագրեցին խմբագրատան մէջ եղողներին։

—

Երեքշաբթի, յուլիսի 11-ին, երեկոյեան ժամը 6 և կէսին Կաթոլիկների փողոցի վրա 2 անյայտ չարագործներ յարձակվել են վաճառական Օսիպօվի վրա, որի խանութը գտնվում է ծածկած բազարում։ Չարագործներից մէկը դանակով ծանր կերպով վիրաւորել է Օսիպօվին և երկուսն էլ սկսել են փախչել։ Նրան յետևից ընկնող գօրօդօվօյները և մի քանի մարդիկ չեն կարողացել ձերբակալել նրանց։ Դէպքի տեղը գտել են մի դանակ և յարձակվողներից մէկի գտակը։

—

Թիֆլիսում լուր է ստացվել, որ Վարշավայում վախճանվել է 56 տարեկան հասակում Թիֆլիսեցի բժ. Ալէքսանդր Յ. Տէր-Յարութիւնեանը, որը իր ամբողջ կարողութիւնը (2 տուն Կարսում և 15,000 րուբլի կանխիկ դրամ) նոտարական կարգով կտակել է Էջմիածնի վանքին այն պայմանով, որ վանքը հանգուցեալի ծնողներին վճարէ տարեկան 600 րուբլի, իսկ տներից ստացած եկամուտով և դրամագլխի տոկոսներով բանայ Թիւրքաց Հայաստանում մի ուսումնարան և պահել մի քանի թոշակաւորներ հանգուցեալի անունով։ Բացի դրանից, հանգուցեալը իր հարուստ գրադարանը նուիրել է Կարսի հայոց բարեգործական ընկերութեան։

—

Լ. Մ. Տէր-Յովհաննիսեանը խնդրում է Թիֆլիսի նահանգապետին թոյլ տալ իրան հրատարակել իր խմբագրութեամբ ռուսերէն լեզուով մի ամենօրեայ լրագիր «Тифлисскій Телеграфъ» անունով։

—

«Т. Л.» լրագրին գրում են Գանձակից. «Յուլիսի 8-ին, առաւօտեան հրդեհը ոչնչացրեց քաղաքային հաշտարար բաժանմունքի շինութիւնը։ Շինութեան հետ միասին կրակը ոչնչացրել է բաժանմունքի բոլոր ընթացիկ գործերը, քննիչի սենեակը, կահ-կարասիքը։ Հրդեհը, ինչպէս իմացվեց, սկսվել է հաշտարար միջնորդի առանձնասենեակից, և, շնորհիւ այդ տեսակ վառվող նիւթերի բոցը, շտապով շրջապատեց բաժանմունքի ամբողջ շինութիւնը, և վերջինը այրվեց ընդամենը 3 ժամվայ ընթացքում։ Հրդեհը կասկածաւոր է»։

—

Յուլիսի 10-ին Արաս-Արազսկի հրապարակի վրա կօզակները խուզարկեցին մի կօշկարի խանութ, տարան 2 արծաթէ գօտի և մի ժամացոյց։

—

Յուլիսի 12-ին Դ. Կրինսկու բնակարանից (Սօլօմօնօվսկի փողոց) անյայտ չարագործները գողացել էին 1 խալիչա և տաք վերմակ։ Շնորհիւ ձեռք առած միջոցների, աջողվեց ձերբակալել չարագործներին, որոնցից մէկը տեղացի Գ. Գօգիձէն է, իսկ միւսը Եգթիմէ Նացվալիշվիլին, որոնց ուղարկեցին բանտը։

—

Յուլիսի լոյս 11-ի գիշերը Ռուսակի փողոցում Ս. Պօղոսեանի ճաշարանը բաց պատուհանից մտել են 2 անյայտ չարագործներ և, գողանալով ժամացոյց և զգեստ, փախել են նոյն փողոցով. օկօլօդօչնի վերակացուին աջողվել է ձերբակալել փախչողներից մէկին, Գեղամ Սարգսեան անունով։ Նրա մօտ գտնվել է 3 ատրճանակ։ Պօղոսեանը ճանաչել է նրան և յայտնել է, որ չարագործներից մէկը նա է եղել։

—

Գօրի քաղաքից մեզ հաղորդում են, որ յուլիսի 8-ին, գիշերվայ ժամի 11-ին, քաղաքային այգու մօտ մի անյայտ մարդ մի քանի գնդակներ է արձակում Նօվօ-Բայազետեան գնդի 5-րդ վաշտի զինուորների պահակի վրա։ Պահակը իր կողմից հրացանի երկու գնդակ է արձակում և տեղն ու տեղը կալանաւորում թփերում պահ մտած Գօրու բնակիչ փականագործ Նիկօլա Մամուլաշվիլուն, որի մօտ գտնվել է երկու ատրճանակ։ Զինուորների հսկողութեամբ բանտ տանելու ժամանակ Մամուլաշվիլին փորձում է փախչել, որի ժամանակ և սպանվում է։

—

Նուխի վիճակից հեռագրում են, որ յուլիսի 11-ին Պենդենի և Գորեանչի Ջերմուկի մօտ կողոպտված է պօստը։ Կողոպտված փողի գումարը յայտնի չէ դեռ։ Պօստատարը սպանված է, կառապանը վիրաւորված։ Դէպքի տեղն է գնացել բաժանմունքի ատամանը։

—

Քութայիսի նահանգապետը զեկուցանում է կովկասեան ոստիկանական գլխաւոր կառավարչին յուլիսի 10-ից, որ մի քանի օր առաջ, գիշերը, Զուգդիդի գաւառի Ուգամօն գիւղում հինգ զինված չարագործներ, յարձակվելով նոյն գիւղի բնակիչ Իվան Մակացարիայի տան վրա, խլել են նրանից 60 րուբլի փող, ոսկեղէն և արծաթեղէն իրեր 60 րուբլի արժէքով և յետոյ անյայտացել։ Քննութիւնը պարզել է, որ այդ կողոպուտը, ի թիւս ուրիշների, կատարել է գիւղացի Բէգի Րօզավօ։

—

Քութայիսի գաւառապետը զեկուցանում է Թիֆլիս, որ յուլիսի 5-ին, մօտաւորապէս առաւօտեան ժամի 8-ին, չորս անյայտ չարագործներ Քութայիս քաղաքից 14 վերստ հեռու Բաղդադեան խճուղու վրա յարձակվեցին երկու հանրակառքերի վրա, որոնք Բաղդադից գնում էին դէպի Քութայիս, և կողոպտեցին Քութայիսի նահանգական դատարանի քարտուղարի օգնական Պլատօն Սուլաձէին, Բաղդադի հաշտարար մասի քարտուղարի օգնական Րոբոլիձէին և ուրիշ տասն երկու ճանապարհորդների, որոնցից խլել են ընդամենը 700 րուբլի փող, մի ատրճանակ և 25 րուբլի արժէքով մի ժամացոյց։ Աւազակներին որոնելու համար եռանդուն միջոցներ են ձեռք առնըվել։

—

Մեզ խնդրում են հաղորդել, որ հինգշաբթի, յուլիսի 20-ին, սիրողների խումբը մասնակցութեամբ տ. Ագնիսի և պ.պ. Անդրանիկի ու Բերոյեանի բարեգործական նպատակով կը ներկայացնէ «Մարվող ճրագներ» պիէսը և «Ադամ և Եւա» վօդևիլը։

—

Յուլիսի 11-ին գործադուլ արին 8-րդ քաղաքամասի զբօսակայքի արհեստանոցների վարպետները և նրանց օգնականները, ներկայացնելով իրանց տէրերին տնտեսական պահանջներ։ (K.)

—

Յուլիսի 12-ին, առաւօտեան ժամը 8-ին, Վեազինսկի ծխական ուսումնարանի ուսուցիչ Գօրկօզօվը յայտնեց 3-րդ քաղաքամասի ոստիկանութեանը, որ հէնց որ նա հասաւ Թիֆլիս կայարանը, նրան մօտեցաւ մի երիտասարդ և խնդրեց գնալ նրա հետ և իջնել «Южные номер» հիւրանոցը, և Գօրկօզօվը համաձայնվեց, և հէնց որ նրանք հասան հիւրանոց, նրանց հետ միացաւ մի ուրիշ բարձրահասակ երիտասարդ, որը պահ տուեց Գօրկօզօվին փողի քսակ, որի մէջ, երիտասարդի ասելով, պէտք է լինէր 700 րուբլի, բայց նրա մէջ կար միայն 8 րուբլի փող, բանալի և թղթեր։ Քսակը Գօրկօզօվին տալուց յետոյ, նրանցից մէկը յայտնեց, որ քսակ է կորցրել։ Երկուսն էլ սկսեցին խուզարկել Գօրկօզօվին, որի ժամանակ խլեցին վերջինից քսակը, որի մէջ կար 146 րուբլի փող, և անյայտացան։ Քննութիւն է կատարվում։

—

Ներքին գործերի մինիստրը ոստիկանական դեպարտամենտին ուղղել է մի շրջաբերական, որով առաջարկում է բոլոր նահանգապետներին, ագրարական շարժման հետ շաղկապված խլրտումները սաստկանալու պատճառով, անձամբ այցելել անկարգութիւնների տեղերը և խելքի բերել յուզվողներին։ Եթէ իրանք չեն կարող գնալ, պէտք է ուղարկեն իրանց փոխարէն փոխ-նահանգապետներին, միայն թէ չը բաւականանալ ադմինիստրացիայի ստորին պաշտօնեաների զեկուցումներով։ («Страна»)

—

Հաստատ աղբիւրներից «Нов. Вр.» լրագիրը իմացել է, որ մինչև մի երեք շաբաթ Բարձրագոյն իշխանութեանը կը ներկայացնվի Պորտ-Արտուրի անձնատուր լինելու մասին գեներալ Րօօպի քննիչ մասնաժողովի զեկուցումը։ Մասնաժողովը եկել է այն եզրակացութեան, որ մեղադրվողները դատի պէտք է ենթարկվեն, և օրէնքի հիման վրա գեներալ Ստէսսելը պէտք է զրկվի բոլոր իրաւունքներից, շքանշաններից ու ենթարկվի մահուան պատժի գնդակահարութեամբ. գեներալ Ֆօկը՝ 20 տարվայ տաժանակիր աշխատանքի և զրկվի զինուորական կոչումից ու նշաններից։ Գեներալ Րէյսը՝ աքսորվի։ Հետաւոր Արևելքի նախկին փոխարքայ Ալէքսէյէվը, գեներալներ Սմիրնօվ, Վերնադեր և մի քանի ուրիշները Բարձրագոյն նկատողութեան։

—

Յուլիսի 5-ին Պետերբուրգի Կօլօմինսկի քաղաքամասի գօրօդօվօյները գործադուլ արին և հագուստները փոխելով, «Наш. Жиз.»-ի ասելով, ահագին բազմութեան ուղեկցութեամբ գնացին միւս մասերի հերթապահ գօրօդօվօյներին էլ վերցնելու։ Սպասկի մասում կանգնած հերթապահ գօրօդօվօյին մօտենալով նրանք աշխատեցին համոզել նրան, որ նա էլ միանայ իրանց հետ։ Հերթապահը հրեց գործադուլ անողին: Վերջինս շորերի տակից դուրս հանեց սուրը և ուզում էր հարուածել հերթապահին, բայց հասարակութիւնը թոյլ չը տուեց, որից յետոյ գործադուլ անող գօրօդօվօյները մարսելիեզ երգելով գնացին Սպասսկի մասի շինութիւնը, բայց այդտեղ կօզակները և հեծեալ գօրօդօվօյները ցրեցին նրանց: Դրանից յետոյ նրանք հեռացան:

---

*) Թուրքերէն «ղուլդուր» բառից։

*) Մեր խմբագրատունը ստացաւ մի թռուցիկ, որի մէջ Դաշն. Արեւելեան Բիւրօն նախազգուշացնում է դաշնակցականներին ոչ մի ընդհարում չունենալ հնչակեանների հետ։ Թռուցիկը տպված է Զանգեզուրի դէպքերի առիթով։

—

Գաղտնի ոստիկանական գործակալների թիւը Պետերհօֆում վերջին օրերս աւելացված է 75 հոգով: Գեներալ Տրեպօվին պահպանելու համար նշանակված են 26 գործակալներ:

—

Պալատական բարձր շրջաններում յուլիսի 1-ին անհանգիստ լուրեր են տարածված եղել, որ յուլիսի 2-ին Պետերբուրգից Սերգիէվօ եկող 60 հազարական բանուորները մտադիր են մաղթանքից յետոյ Պետերհօֆի վրա գնալ: Դրա առաջն առնելու համար Պետերհօֆից Սերգիէվօ էին ուղարկվել հեծելազօրք և ժանդարմներ: Բայց այդ լուրը լուր էլ մնաց: Բանուորները օրինաւոր կարգապահութեամբ մաղթանքից յետոյ վերադառնում են խաղաղ կերպով: («XX Вѣкъ»)

—

Սէվաստոպոլի ապստամբութեանը մասնակցող բերդային արտիլերիայի զինուորները ներկայումս բանտարկված են Միխայլովսկի բերդի երկրորդ յարկում: Ուրիշների հետ յարաբերութիւն չունենալու և չը փախչելու համար բանտի լուսամուտները տախտակներով ամուր փակված են: Կալանաւորածները թւով 1000 հոգուց աւելի են: Ապստամբութեանը մասնակցել են 6 վաշտեր: («XX Вѣкъ»)

—

Պետրօպավլովսկի բերդում ապրող բոլոր օֆիցերներին հրամայված է բերդային կոմենդանտներին մանրամասն տեղեկութիւններ տալ իրանց մօտ յաճախող բոլոր ազգականների ու ծանօթների մասին: Զինուորներին քաղաք ուղարկելը համարեա ընդհատված է: Բերդային զօրքի մէջ մի քանի ծառայողներ, որոնց վրա կասկած կայ որ ազդեցութիւն ունեն իրանց ընկերների մէջ, ուղարկել են Մէզվէզ գիւղը կամ ուրիշ խուլ անկիւնների զօրքերի մէջ: «XX Вѣкъ»

—

ՍՏԱՒՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են.—Վլադիկաւկազում կայանալիք պատուիրակների ժողովում այստեղից պատուիրակ ընտրվեց Մօսկվայի տեխնիքական դպրոցի ուսանող Գարեգին Սարգսեանց (սօցիալ-դեմօկրատ): Պատուիրակների ժողովը լինելու է յուլիսի 15-ին:

—

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ մեզ գրում են.«Ղարաքիլիսան գեղեցիկ է իր դիրքով, առողջարար կլիմայով և ճոխ բուսականութեամբ: Ընկած անտառի մօտ մի ընդարձակ տափարակում, գիւղը ունի ամենամեծ յարմարութիւններ՝ ջուրը համեղ, օդը առողջարար, զբօսատեղիները շատ, մթերքներն էլ այնքան թանգ չեն, միայն տեղացի բնակիչները մի տեսակ «դըլջլեւս» տրամադրութեամբ են վերաբերվում դէպի եկւորները:

«Գիւղը իր ծայրում ունի մի քարաշէն եկեղեցի, որը կիրակի օրերով լի է լինում «դաչնիկներով»: Գիւղում շաբաթական մէկ անգամ երիտասարդութիւնը կազմակերպում է ժողովրդական մատչելի ներկայացումներ, երեկոյթներ և համերգներ: Գիւղը ունի նաև 2 դպրոց, ռուսաց և օրիորդաց: Առաջինի մասին չենք խօսի, որովհետև նա մի կերպ տանելի է ուսումնարանական առողջապահական տեսակէտից: Իսկ ինչ վերաբերում է օրիորդաց ուսումնարանին, այստեղ անկարող ենք մեր զայրոյթը չը յայտնել: Գնացի և աչքով տեսայ այդ դպրոցը: Երևակայիր, ընթերցող, ուսումնարանի շինութիւնը առանձին տեղ չունի, պատերը կիսով չափ քանդված, ծռված, բակը լիքն էր զանազան կեղտոտութիւններով: Վառարանի խողովակը ձմեռ ժամանակը դուրս է գալիս պատուհանի միջից, չը կան կանօնաւոր նստարաններ, իսկ 200 հոգու չափ աշակերտուհիները, չը գիտենք իրանց որ մեղքի պատճառով, դատապարտված են նստել միասին, մի փոքրիկ «զալում», չը նայելով որ, ինչպէս պատմեցին, տեղական իշխանութեան տրամադրութեան տակ ներկայումս գտնվում է մօտ 16000 րուբլի:

«Այս տարի գիւղում երաժշտութիւն չը կայ, որ ի հարկէ զգալի է ամառանոց գնացածների համար, իսկ միւս կողմից անձրևները անպակաս են. գրեթէ ամեն օր անձրև է գալիս: Մինչև այժմ ոչ մի ընդհարման դէպք տեղի չի ունեցել, չը նայելով որ Ղարաքիլիսայից ոչ հեռու գտնվում են թաթարական բազմաթիւ գիւղեր: Գիւղն ունի ինքնապաշտպանութեան միջոցներ. Թուրքերը առաջվայ նման մտերմական յարաբերութիւնների մէջ են հայերի հետ: Այս տարի հացը առատ է, միայն մրգի պակասութիւն է զգացվում»:

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Յուլիսի 9-ին կայացաւ տեղիս ս. Փրկիչ եկեղեցում ծխական ընդհանուր ժողով օգոստոսի 15-ին տեղի ունենալիք կենտրոնական ժողովի համար պատգամաւոր ընտրելու նպատակով պատուիրակներ ընտրելու: Ժողովը երկրորդ անգամն էր հրաւիրված. խիստ բազմամարդ էր: Նախագահ ընտրվեց Միհրոպ աւագ քահանայ Մելեան, քարտուղար Յովհաննէս Բալայեան: Հայրապետական կոնդակները կարդացվելուց յետոյ, հարց եղաւ թէ քանի՞ պատուիրակ պիտի ընտրվի Բաթում քաղաքի հայերի կողմից: Ծխական վիճակագրութիւնը ի նկատի առնելով, որոշվեց ընտրել վեց պատուիրակ, հաշուելով առ նուազն 6000 հայ: Ընտրութիւնից առաջ կարևոր դատվեց որոշել այն մանդատը, յանձնարարութիւնը, որ ծխական ժողովը կարևոր համարեց տալ իր ներկայացուցչին: Երկար ճառախօսութիւններից յետոյ վճռվեց պարտաւորեցնել պատգամաւորին կենտրոնական ժողովից պահանջելու Ա. որ միջոցներ ձեռք առնվեն մօտիկ ապագայում գումարելու Ռուսաստանի սահմաններից դուրս ապրող բոլոր հայերի մասնակցութեամբ մի մեծ համազգային ժողով ազգային ընդհանուր բնաւորութիւն կրող խնդիրները լուծելու համար: Բ. որ կենտրոնական ժողովը իր խորհրդակցութեան խնդիր դարձնէ մեր տաճկահայ եղբայրների անտանելի դրութիւնը և որ մեր հոգևորական-հասարակական բնոյթ ունեցող բոլոր գործերը՝ վարչական, կրթական, տնտեսական՝ առնվեն հոգևորականութեան ձեռքից ու դրվեն ժողովրդի կողմից քառաստիճան ընտրութեամբ կազմված կենտրոնական ժողովի իրաւասութեան տակ, թողնելով հոգևորականութեանը միայն ծխական-դաւանաբանական արարողութիւնները: Սրանից յետոյ, ժամանակն արդէն անցած լինելու պատճառով, որոշվեց ժողովի շարունակութիւնը կատարել միւս օրը, երկուշաբթի, ժամի 7-ին երեկոյեան: Ամսիս 10-ին, երեկոյեան ժամի 7-ին, սկսվեց ժողովի շարունակութիւնը. կարդացվեց արձանագրութիւնը և ապա առաջարկվեցին թեկնածուներ, որոնց թիւը 20-ից անցաւ, բայց, ոմանց հրաժարվելով, քուէարկութեան ենթարկվեցին 15 հոգի: Դրված էին 15 քուէատուփ հետևեալ անձանց. Համբ. Տէր-Մելիքսեան, Կար. Խաչատրեան, Յով. Բալայեան, Տիգ. Մեսեան, Մէլիք-Շահնազարեան, Ղուկ. Սամուէլեան, Մամ. Յակոբեան, Արշ. Աւագեան, Ար. Մակարեան, տիկին Շուշ. Յարութիւնեան, Հայկ Սողոմոնեան, Յակ. Միզաւուրեան, Կար. Մկրտումեան, Յակ. Ղազարեան և Լևոն Փօզօսեան: Սրանցից ընտրվեցին տ. Շ. Յարութիւնեան 220 ձայնով, Հ. Սողոմոնեան 215 ձայնով Կ. Մկրտումեան 210, Լ. Փօզօսեան 178, Կ. Խաչատրեան 168 և Յ. Բալայեան 163 ձայնով: Քուէարկութեան մասնակցում էին 280 հոգի: Ընտրութիւնը վերջացաւ գիշերվայ 11-ից անց: Նոյն ծխական ժողովի որոշմամբ վճռվեց ուղարկել Վեհափառ Կաթողիկոսին հետևեալ հեռագիրը նախագահի և քարտուղարի ստորագրութեամբ. «Նորին Վեհափառութեան ծայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի ամենայն հայոց. Բաթումի եկեղեցու ծխական բազմամարդ ընդհանուր ժողովը, կատարելով պատուիրակների ընտրութիւնը, յայտնում է Ձերդ Վեհափառութեանը իր բերկրանքը ժողովրդական իրաւունքների վերականգնման համար և պատրաստակամութիւնը ամեն կերպ պաշտպանելու իր իրաւունքները»: Ժողովը կազմված էր «Դաշնակցական» ու «Հնչակեան» անդամներից: Յաղթանակը տարան «դաշնակցականները», Մասնակցում էին և կանայք, և ամենից շատ ձայն ստացաւ տիկին Յարութիւնեան: Ընտրութեան համար ժողով նշանակված օրը նիստը բացվելուց առաջ, ս. պատարագին՝ կարդացվեցին պատշաճաւոր արարողութեամբ Կաթողիկոսի վերջին երեք կոնդակները, և կատարվեց հայրապետական մաղթանք: Եկեղեցու ներսը և դուրսը լիքն էր երկսեռ բազմութեամբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Պարսկաստանը կրիտիքական օրեր է անցկացնում: Կրիտիքական՝ մի կողմից թիւրք-պարսկական սահմանային կօնֆլիկտի և միւս կողմից էլ երկրի մայրաքաղաքում ծագած յեղափոխական շարժման շնորհիւ որ ժամանակի ընթացքում կարող է ծաւալվել և լայն չափեր ընդունել, եթէ պարսից կառավարութեան չյաջողվի դրա առաջը կտրել և խելացի միջոցներով առնել, այն է իր հպատակ և խաղաղասէր ժողովրդի սահմանադրական արդար և չափաւոր պահանջներին բաւարարութիւն տալով:

Զնայելով, որ պարսից կառավարութիւնը արդէն մի քանի ամսից ի վեր խաղաղ և դիպլոմատական ճանապարհով միջոցների է դիմում իր երկրի հիւսիս արևմտեան սահմանագլխում ծագած կոնֆլիկտին վերջ տալ և դրա համար քանիցս դիմումներ է արել իր երկրով շահագրգռված երկու մեծ պետութիւնների՝ Անգլիային և Ռուսաստանին իբրև հաշտարար միջնորդների, բայց այնուամենայնիւ Թիւրքիայի Մեծ Մարգասպանը, որ իր աննախանձելի գոյութիւնը միշտ պահպանել է քաղաքական ամենախոշոր ոտնձգութիւններով, չէ ցանկանում իր վայրենի զօրքերը հեռացնել այն վայրերից, որոնց պատմական իրաւունքը պատկանում է Պարսկաստանին:

Ինչպէս երևում է, Թիւրքիայի և Իրանի մէջ ծագած սահմանային այդ կօնֆլիկտը դեռ երկար պէտք է շարունակվի և զգալի կերպով վրդովի Պարսկաստանի քաղաքական խաղաղութիւնը, որը առանց դրան էլ երկրի ներսում ծագած ժողովրդական խռովութիւնների շնորհիւ երկու ամսից ի վեր խանգարվել է:

Եւրօպական թերթերը նորերս հաղորդեցին, որ Կ. Պոլսի պարսից դեսպանը իր կառավարութեան յանձնարարութեամբ ուղղակի դիմել է սուլթանին, հարցնելով նրան, թէ արդեօք Թիւրքիան նպատակ ունի պատերազմ յայտարարելու Պարսկաստանին, երբ նա չէ ցանկանում իր զօրքերը Պարսկաստանի սահմանագլխից հեռացնելու և դրանց թիւը հետզհետէ աւելացնում է այնտեղ: Սուլթանը իբր թէ նրան պաշտօնապէս պատասխանել է, որ Թիւրքիան այդպիսի նպատակ չունի և Պարսկաստանի սահմանագլխում կենտրոնացրած իր զօրքի քանակը շատ աննշան է:

Թիւրքիայի այդ խօսքերը, ի հարկէ, բարոյական նշանակութիւնից բոլորովին զուրկ են և չեն փոխում իրերի այն ծանր դրութիւնը և վտանգը, որին ներկայումս ենթարկված է Իրանի կառավարութիւնը սահմանային այդ կոնֆլիկտի շնորհիւ:

Եւ շատ հաւանական էր ենթադրել, որ «Հիւանդ մարդու» քաղաքական այդ ոտնձգութեան մէջ զգալի մասնակցութիւն ունի և Գերմանիան, որ նրան քաղաքականը այդ օրինական նախանձելի դասեր է տուել:

Գերմանիան շատ լաւ գիտէ, որ Պարսկաստանի քաղաքական գոյութեանը վաղուց ի վեր վտանգ են սպառնում Անգլիան և Ռուսաստանը և վաղ թէ ուշ այդ երկիրը պէտք է բաժանվի վերոյիշեալ երկու մեծ պետութիւնների մէջ, գրգռել է Թիւրքիային այդ բացասական քայլը անելու և ինքը միևնոյն ժամանակ այժմ սկսել է աւելի եռանդով հետաքրքրվել Պարսկաստանի գործերով, ցանկանալով քաղաքական և տնտեսական մի քանի արտօնութիւններ ձեռք բերել այդ երկրի նկատմամբ:

Բաղդադի հսկայական երկաթուղին, որի շնորհիւ Գերմանիան տնտեսական և միևնոյն ժամանակ քաղաքական մեծ գերակշռութիւն է ստանալու մօտ ապագայում Թիւրքիայում, աւելի լաւ կը լինէր, եթէ ունենար իր ճիւղաւորութիւնները նաև Պարսկաստանում:

Գերմանիան Պարսկաստանի վերաբերմամբ քաղաքական և տնտեսական արտօնութիւններ ձեռք բերելու համար դիմում է ոչ թէ ուղիղ, այլ ծուռ ու մութ ճանապարհների: Դրա համար է, որ նորերս գերմանական ամենամեծ շոգենաւային՝ «Hamdurg—Amerika Linie» ընկերութիւնը դիմել է պարսից կառավարութեան Պարսից ծոցի ափերում քարածխային կայարաններ ունենալ և բացի դրանից դրա համար է, որ գերմանական մի ընկերութիւն դիմել է պարսից կառավարութեան, որպէս զի վերջինս իրան թոյլ տայ կիրմանշահ քաղաքից մի երկաթուղի շինելու, որ ապագայում պէտք է միանայ Բաղդադի մեծ երկաթուղու հետ:

Հաւաստի աղբիւրից մենք նաև տեղեկացել ենք, որ պարսից կառավարութիւնը գերմանացիներին արդէն թոյլ է տուել իր պետութեան մայրաքաղաքում գերմանական մի մեծ դպրոց հիմնելու, որը Պարսկաստանում Գերմանիայի քաղաքական ազդեցութեան զարգացման համար բաւական մեծ ծառայութիւն պէտք է կատարի:

Այդպիսի մի դպրոց էլ ռուսաց կառավարութիւնը նորերս հիմնեց Պարսկաստանի Խորասան նահանգի Սաբզվար քաղաքում, որը դեռ ևս իր սաղմնային դրութեան մէջ է գտնվում:

Վերադառնալով թիւրք-պարսկական կօնֆլիկտի հարցին, մեզ թւում է, որ այդ խնդիրը կամ խաղաղ ճանապարհով չը պէտք է լուծվի, իսկ եթէ լուծվի էլ, Պարսկաստանը պէտք է լինի երկու կողմերից անտեսապէս տուժողը:

Պարսկաստանի սահմանագլխում Թիւրքիայի մինչև այժմ բռնած դիրքը ցոյց է տալիս, որ նա այնտեղից չը պէտք է հեռանայ, մինչև որ պարսից կառավարութիւնից մեծ զիջումներ չը ստանայ:

Այդպէս է հասկացրել Թիւրքան նաև այն կոմիսիային, որ ներկայումս գտնվում է սահմանագլխում՝ Բերլինի ներկայ պարսից դեսպանի առաջնորդութեամբ և որի նպատակն է խաղաղ կերպով և առանց միջամտելու վերջ տալ վերոյիշեալ կօնֆլիկտին:

Ցամենայն դէպս այդ հարցը կարճ ժամանակից յետոյ այսպէս թէ այնպէս պէտք է լուծվի: Entweder oder.

Ինչ վերաբերում է Պարսկաստանի մայրաքաղաքում ծագած յեղափոխական շարժման մանրամասնութիւններին երկու օր առաջ մենք ստացել ենք երկու նամակներ, որ ամբողջապէս առաջ կը բերենք հետևեալ անգամ:

Լ. Բաբայեան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 յուլիսի

ՕԴԵՍՍԱ, 10 յուլիսի: Սպանված կօզակին հանգիստ թաղելուց յետոյ, կէսօրվայ ժամը 1-ի մօտերքը փորձեր եղան հրէական ջարդ կազմելու: Ձեռք առած կտրուկ միջոցներով ջարդը ժամի 4-ի մօտերքը դադարեց: Վնասները աննշան են: Ժամը 7-ին քաղաքի ծայրերում անկարգութիւնները վերսկսվեցին և ընդունեցին աւելի ընդարձակ չափեր: Կողոպտում, աւերում են բոլոր խանութներն անխտիր: Հրէաները սարսափահարված փախչում են քաղաքի կենտրոնական մասը: Շատերը բոլորովին մեկնում են:

ԼՕՆԴՕՆ, 10 յուլիսի: Բացվեց միջպարլամենտական կօնֆերենցիայի նիստը: Ներկայ են 500 պատգամաւորներ: Նախագահ է ընտրվում լօրդ Ուէյրդէլ, որ ցնծագին ողջունում է կօնֆերենցիայի բազմամարդ լինելու առիթով, առանձնապէս սրտագին վերաբերմունք է ցոյց տալիս դէպի ռուս պատգամաւորները: Վերջին ողջոյնի ժամանակ ամբողջ կօնֆերենցիան բարձրանում է տեղից և երկար ծափահարում է ռուս պատգամաւորներին: Նախագահը ցոյց է տալիս, որ ընդհանուր հաշտութեան գործը արդէն ընթացք է առացել և դիմում է վերջնական յաղթութեան, և ինքը մի առանձին հաւատով սպասում է այն ժամին, երբ պատերազմ չի լինի առանց նախօրոք միջնորդ դատարանին դիմելու, որ վերջ դնվի պատահած կօնֆլիկտին: Բաններմանը պատասխան-ճառով ողջունում է կօնֆերենցիան և ասում է, որ թագաւորը իրան լիազօրացրել է կօնֆերենցիայի անդամներին հիւրասիրութիւն ցոյց տալու և յայտնելու, որ ինքը թագաւորը մեծ հետաքրքրութեամբ է վերաբերվում կօնֆերենցիային, որ կունենայ անշուշտ պատմական նշանակութիւն, թէև պաշտօնական բնաւորութիւն չէ կրում: Կառավարութիւնը միանում է կօնֆերենցիային ամբողջ սրտով: Միջպարլամենտական կօնֆերենցիայի սկսած գործը միայն «սկիզբն է երկանց», բայց ընդհանուր հաշտութիւնը և խաղաղութիւնը արդէն բոլորի ցանկութիւնն է: Առանձնապէս նա ողջունում է ռուս պատգամաւորներին (հաւանութեան բարձր աղաղակներ և նշաններ), ողջունում է կայսրին, որ այնքան շատ բան արեց հաշտութեան օգտին և որ առաջինը պարտաւորվեց Հաագի կօնֆերենցիան գումարելու: Ճիշտ է, Դուման այժմ արձակված է, բայց և այնպէս կարելի է համոզված ասել, որ նա կրկին կը գումարվի: Հռետորը վերջում բացականչում է. «Այո, Դուման մեռաւ, կեցցէ Դուման» (Լսվում են համակրանքի բարձր և երկարատև բացականչութիւններ): Բաններմանը յոյս է յայտնում, որ միջնորդ դատարանի սկզբունքը կը տարածվի ամենուրեք, և մատնացոյց է լինում, որ զինաթափութիւնը անհրաժեշտ է: «Ժողովրդական մասսաները,—ասում է Բաններմանը,—այժմ մեր կողմն են կանգնած, և կը գայ ժամանակ, երբ դեմօկրատիան իրան կը պարզէ, որ ժողովուրդները սոսկ զոհեր են միլիտարիզմի (զինման), որ մշտապէս կաշկանդում է նրանց զարգացումը: Մենք լաւ նախագուշակութիւն ենք համարում, որ ռուս պարլամենտի պաշտօնական առաջին քայլը՝ խաղաղասիրութեան սկզբունքները տարածելու համար՝ լիազօրների դատարան նշանակելն եղաւ: Յոյս դնելով պարլամենտական րէժիմի վրա, մենք գիտենք, որ նոր հաստատութիւնները մասամբ անհաստատ են. սակայն մենք հաւատացած ենք, որ Դուման յարութիւն կառնէ այս կամ այն ձևով»: Կովալէվսկին յայտնում է, որ ռուս ժողովուրդը անկեղծօրէն խաղաղութիւն է ցանկանում: Դուման իրան կոչված համարեց՝ ազատել մեծ ժողովուրդը հին րէժիմից: Դումայի պատգամաւորները յոյս ունէին եռանդուն մասնակցութիւն ունենալ կօնֆերենցիային, բայց նրանց միսիան անակնկալ վերջացաւ (բացականչութիւններ «ոչ, ոչ»): Կովալէվսկին շարունակում է.«Մեր համակրանքը կօնֆերենցիային անփոփոխ կը մնայ: (Կը շարունակվի):

ԲԵՐԼԻՆ, 11 յուլ.: Դեռ Դումայի արձակումից շատ առաջ բօրսայում հաւաքվել են շատ վաճառականներ և քննել են Դումայի արձակումը. բօրսան յուզվել է, բայց ոչ այն աստիճան, ինչպէս սպասվում էր: Այսօր ռուսաց արժէքաւոր իրերի գները ընկաւ, որովհետև Լօնդօնից հաղորդեցին, որ 1906 թ. 5%-ային ռուս փոխառութիւնը իջել է 9¼%-ի: Վալիւտան այդ ժամանակամիջոցում իջել է մինչև ⅔ (?):

ՄՕՍԿՎԱ, 11 յուլ.: Երեկվանից երկաթուղային գծերի վրա պահնորդութիւնը սկսեցին ուժեղացնել: Բրեստսկի կայարանում կանգնեցրած է պատրաստ զօրախումբ: Նիկօլաէվսկի երկաթուղու ամբողջ գիծը յայտարարված է ուժեղացրած հսկողութեան մէջ: Քաղաքում միջոցներ են ձեռք առնված հանգստութիւնը պահպանելու համար: Բանակատեղից կանչված են դրագուններ և հետևակներ:

ԽԱՐԿՕՎ, 11 յուլ.: Շոգեգործարանի բանուորները առանց պատճառները բացատրելու աշխատանքները դադարեցրին:

ԿԻՍԼՕՎՕԴՍԿ, 11 յուլ.: Այսօր բոլոր ռեստորանները, փուռերը, խանութները և վանները փակ են: Ուտելիքն ոչինչ չէ կարելի ճարել: Առաւօտեան ցուցարարները կարմիր դրօշակներով և «մարսելիեզով» սկսեցին դիմել ծառաստան, ուր միտինգ կայացաւ: Ներկայ էին առաւելապէս բանուորներ: Վճռված է խուսափել անկարգութիւններից և գործադուլի դէպքում բանալ միայն փուռերը և ուտելիքների խանութները: Երեկոյեան քաղաքս հասաւ պլաստունների մի հարիւրեակ: Վաղը բանուորները աշխատանքի կը կոչեն:

ՏՕԿԻՕ, 11 յուլիսի: Վախճանվեց գլխաւոր շտաբի կառավարիչ գեներալ Կօդաման:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յուլիսի: (Պաշտօնական): Մինիստրների խորհրդի նախագահ ներքին գործերի մինիստր գ. Ստօլիպինի հեռագիրը սոյն տարվայ յուլիսի 11-ից գեներալ-նահանգապետներին, նահանգապետներին և քաղաքապետներին և ի տեղեկութիւն Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքային. «Համաձայն Թագաւոր Կայսրից իմ ստացած ցուցմունքների, տեղական իշխանութիւնների գործողութիւնները լիովին համաձայնեցնելու և միացնելու դիտումով, հաղորդում եմ, որ կարգը անյողդողդ, արագ և հաստատ կերպով վերականգնելու գործերում ձեզանից պահանջվում է ամենակտրուկ, առանց որ և է երկբայման կամ տատանման ղեկավարութիւն՝ ձեզ ենթակայ մարմինների նկատմամբ: Բացարձակ անկարգութիւններին պէտք է հանդիպել ուժեղ ընդդիմադրութեամբ: Յեղափոխական բանդագուշանքները պէտք է յօգս ցնդվեն օրէնքի բոլոր միջոցներով: Ձեռք առած միջոցները պէտք է խիստ նախամտածված և համապատասխան լինեն: Կռիւը ուղղված է ոչ թէ հասարակութեան դէմ, այլ նոյն հասարակութեան թշնամիների դէմ: Ընդհանուրի դէմ ուղղված բռնաբարութիւնները չեն կարող հաւանութիւն գտնել: Ապօրէնի կամ անզգոյշ գործողութիւնները, որ փոխանակ հանգստութեան չարութիւն կը ծնեն, աններելի են և անտանելի: Կայսրի մտադրութիւնները անփոփոխ են: Ուստի կառավարութիւնը հաստատ մտադրութիւն ունի օրինական կարգով վերացնել կամ փոփոխութեան ենթարկել իրանց դարն անցրած և իրանց նշանակութեան անհամապատասխան բոլոր օրէնքները: Հին կարգը վերանորոգվելու ուրեմն և կարգը պէտք է պահպանվի լիակատար չափով: Այդ բանի մէջ դուք պէտք է երևան հանէք սեփական նախաձեռնութիւն, և դրա պատասխանատւութիւնը ընկնում է ձեզ վրա: Միայն ուժեղ և հաստատուն իշխանութիւնը, որ կը գործէ վերոյիշեալ ուղղութեամբ, կարող է գտնել անկասկած աջակցութիւն և խոհեմ հասարակութեան լաւագոյն մասի մէջ»:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 յուլիսի: Փակված է սօցիալ-դեմօկրատների ամսաթերթ «Վէրնա Ուկրայնա»-ն, որ լոյս էր տեսնում ուկրայնայի լեզվով:

ԳՐՕԴՆՕ, 11 յուլիսի: Վերխօվիչեսկի շրջանում ագրարային անկարգութիւնները դադարեցին:

ՌՕՄՆԻ, 11 յուլիսի: Գիշերս խուզարկվեց «Свободное Слово» լրագրի խմբագրատունը, լրագիրը փակվեց:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԴԷՈՒՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Պուշկին, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.

Կ. Մ. [illegible]—9½—10 ժ. [illegible] ներքին հիւանդութիւն:

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մաշկի, վեներակ. և վիրաբուժութիւն:

Ջ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.

Ի. Կ. ԳԶԷԼԻԿՕՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ն. Գ. ՍԱՐԳԻՍԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԻՆԺ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՋԷՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. [illegible] և կանանց հ.

ԵՐԵԿՈՅՆԵՐԸ

Ա. Մ. ՓՕԻՊԻՆՕՎ—6—7 ժ. ներքին և երեխայոց և [illegible]

Ե. Գ. ԱՐԵԱՆՑ—7—7½ ժ. ներքին և երեխայոց հ.

Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Հանձնարարելի [illegible] և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

Բ Ժ Ի Շ Կ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Թիֆլիսից մեկնելու պատճառով դադարեցրել է հիւանդների ընդունելութիւնը մինչև օգոստոսի 1-ը:

(ու.) 1—1

ՀՐԱՒԷՐ

Թիֆլիսի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցու յարգելի ծխականները ամսիս 16-ին յիշեալ հրաւիրվում են երկրորդ և վերջին անգամ ժողովի՝ կատարելու նոր երեցփոխի և ծխական ուսումնարանի հոգաբարձուների ընտրութիւնը, այլ և կենտրոնական ժողովի համար պատուիրակների ընտրութիւնը, ցերեկվայ ժամը 12-ին: Այս անգամ ընտրութիւնը կը կատարվի, ծխականների թիւը որքան էլ որ լինի:

Ալէքսանդր աւագ քահ. Տէր-Յովհաննիսեան

(հ. շ. կ.) 1—3

ՀՐԱՒԷՐ

Թիֆլիսի Տափի-Թաղի ս. Գէորգ եկեղեցու 21 տարեկան հասակն առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են շնորհ բերել ամսիս 16-ին ս. Նշանի դպրոցը, որպէս զի երկու պատուիրակ ընտրեն ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը Թիֆլիսում մասնակցելու նպատակով: Ընտրական տոմսերի համար տուփը դրված կը լինի դպրոցում առաւօտեան ժամը 10-ից մինչև 3-ը կէսօրից յետոյ:

(հ. շ. կ.) 1—3

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբազան կոնդակների և Թեմիս ս. Առաջնորդի առաջադրութեան համաձայն, Թիֆլիսի Բեթղեհէմի ս. Աստ. եկեղեցու 21 և աւելի տարեկան արական և իգական բոլոր ծխականները պէտք է ընտրեն մի պատուիրակ Ռուսահայոց եկեղեցական կենտրոնական առաջին ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու. ուստի յարգանքով խնդրում ենք ամսիս 16-ին, կիրակի օրը, առաւօտեան 10 ժամին, շնորհ բերել Բեթղեհէմի եկեղեցին ընտրութեան մասնակցելու: Միաբան Բեթղեհէմի ս. Աստ. եկեղեցու՝ Գէորգ քահանայ Մեհրաբեանց

Երեցփոխան՝ Վասիլ Աւանեանց

(հ. ու. շ. կ.) 1—4

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կոնդակների և Թեմիս Բարձր Սրբազան Առաջնորդի առաջադրութեանց համաձայն, ամսիս 16-ին, կիրակի ժամը 11-ին, Զօրաբաշի ս. Գէորգ եկեղեցումը լինելու է ընտրութիւն մի պատուիրակի, որ մասնակցելու է ընտրութեան Հայոց եկեղեցական առաջին «կենտրոնական» ժողովի չորս պատգամաւորների, ուստի սրանով հրաւիրում եմ 21 և աւելի տարիք ունեցող երկու սեռի ծխականներին, որ շտապեն նոյն օրը և ժամին ներկայ գտնվել յիշեալ իրանց ծխական եկեղեցումը ընտրութեանը մասնակցելու:

Ծխատէր՝ Գրիգոր աւագ քահանայ Մանդակունի

(հ. ու. շ. կ.) 1—4

ՀՐԱՒԷՐ

Վեհափառ Կաթողիկոսի սրբազան կոնդակների համաձայն, Թեմիս առաջնորդի կարգադրութեամբ, Թիֆլիսի Կաթողիկէ ս. Աստուածածին (ս. Գէորգ) եկեղեցու 21 տարին լրացած՝ արական և իգական բոլոր ծխականները պիտի ընտրեն երեք պատուիրակ՝ ռուսահայ եկեղեցական-կենտրօնական ժողովի պատգամաւորական ընտրութեան համար, ուստի յարգելի ծխականները հրաւիրվում են շնորհ բերել ամսիս 16-ին, կիրակի օրը, առաւօտեան 10 ժամին ս. Գէորգ եկեղեցին ընտրութեանը մասնակցելու:

Կաթողիկէ եկեղեցու միաբան՝
Ստեփաննոս աւագ քահ. Սամուէլեանց

Նոյն օրը լինելու է չը կայացած ժողովի փոխարէն ծխական երկրորդ ժողով: Զբաղմունքի առարկաները՝ 1. երեցփոխի հաշիւը, 2. զեկուցում ծխական դպրոցի մասին, 3. տնտեսական խնդիրներ:

Երեցփոխ՝ Յովսէփ Ամիրխանեան

(հ. ու. շ. կ.) 1—4

Նոր-Բայազէտի հայոց ծխական երկդասեան երկսեռ ուսումնարանների համար հարկաւոր է մի ԱՒԱԳ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ճեմարանաւարտ կամ դպրանոցաւարտ, շաբաթական 17 դասով, ընդամենը տարեկան 700 րուբլի ռոճիկով. ցանկացողները կարող են դիմել նոյն դպրոցի հոգաբարձութեան, այս հասցէով. Новобаязеть, попечительству армянскаго училища.

Որովհետև հոգաբարձութիւնը նոր աւագ ուսուցչի հետ պէտք է կազմի ուսուցչական խումբ, ուստի հին ուսուցչական խմբի բոլոր անդամներն համարվում են արձակված:

Անդամք հոգաբարձութեան՝ Հ. Տէր Միքայէլեանց, Խ. Բունիաթեանց, Գ. Բուրումեանց

(ա. օ.) 2—10

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Թիֆլիսի գրավաճառների մօտ
ԼԵՒՈՆ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄԵԱՆԻ
փոխադրած՝
Մանկական պատկերազարդ ու էժան հետևեալ գրքոյկները

ՓՈՔՐԻԿ ՅՈՎԱՆ
ՈՒ
ԽԼԸՇԻԿ ՆԱՊԱՍՏԱԿԸ
Գինը 55 կոպէկ

—

ՆԱՊԱՍՏԱԿ ԽԵՉԱՆԻ
ՎՐԷԺԽՆԴՐՈՒԹԻՒՆԸ
կամ
ԻՆՔԴ ՔԵԶ ՕԳՆԻՐ
Գինը 40 կոպէկ

—

ԱՌԱՋԻՆ ՎԱՍՏԱԿ
Գինը 40 կոպէկ

—

Եւ թարգմանած՝
ՈՍԿԵՀԱՐՍՆՈՒԹԻՒՆ
3 արարուածով պիէսը
Գինը 50 կոպէկ:

(շ. 1) (հ) 5—20

լոյս տեսաւ
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՆԻ
«ՄԻԵՒՆՈՅՆ ԴԱԳԱՂՈՒՄ»
Բ. տպագր.

պատկեր Բաքուի կոտորածից. զոհերի 2 նկարով, գինը 7 կոպ. դիմել՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցը կամ հեղինակին. Հալաբար, Լազարևսկայա № 49: 100-ից պակաս և առանց կանխավճարի հեղինակին չը դիմել.

(հ. շ. ե.) 4—5

Գանձակում տեղի ունեցած բռնհարումների պատճառով ես տեղափոխեցի իմ կենտրօնական ՀԻՒՐԱՆՈՑՍ շքեղ կահկարասիներով Թիֆլիս, Պուշկինսկի փողոցի վրա № 23, պրավօսլավնի հոգևոր սեմինարիայի դիմաց

„ՆՕՄԵՐԱ ՑԵՆՏՐԱԼ“

մակնունով: Գները 70 կոպէկից մինչև 2 րուբլի: Ամսական ցանկացողների հետ առանձին պայմաններով:

Ալէքսանդր Յարութիւնով

(հ. կ. ե.) 36—100

Բ Ժ Ի Շ Կ
Լևոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպեկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2.

(ա. օ.) 191—300

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Վաճառվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում
ՀԻՒԱՆԴ ՄԱՐԴԸ
(Բ. ՇԵՒՐԻՆ)
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ
գերմ. թարգմ.
Լ. ԲԱԲԱՅԵԱՆԻ

առանձին գրքերով լոյս են տեսել թարգմանչի նաև հետևեալ աշխատութիւնները

1. Զ. Վերգա՝ Գիւղական Ասպետութիւն, թարգմ. գերմ. 15 կ.:
2. Մ. Նորդաու՝ Հայրենասէր Իտալացին, թարգմ. գերմ. 10 կ.:
3. Մ. Հալբէ՝ Միասնեմ, թարգմ. գերմ. 15 կ.
4. Ի. Ահօ՝ Երկու նովելլա, թարգմ. գերմ. 10 կ.
5. Հ. Իբսէնի՝ Հասարակութեան Նեցուկները թարգմ. գերմ. դրամա. 50 կ.

(ամ. օր.)

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ է
և մի քանի օրից յետոյ ՇՈՒՏՈՎ լոյս կը տեսնի «Գուտտենբերգ» գրավաճառանոցի հրատարակութեամբ

ԴԱՍԱԳԻՐՔ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ
(Ասիա, Ամերիկա, Աֆրիկա և Աւստրալիա)
քաղաքական մասը:
Կազմեց Լևոն Բաբայեան

Միւս հատորներն էլ պատրաստ կը լինեն օգոստոսի վերջերին: (ա. օ.) 3—5

„ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ ԱՂԲԻՒՐ“

РАДИКАЛЬНОЕ СРЕДСТВО,
ДѢЛАЮЩЕЕ ЛИЦО СВѢЖИМЪ И ЧИСТЫМЪ

Источникъ красоты. Патент. въ Англіи.



Кремъ КАЗИМИ
МЕТАМОРФОЗА
противъ ВЕСНУШЕКЪ

Доказательствомъ подлинности и дѣйствительности средства противъ веснушекъ служитъ подпись Cazimi и приложенный при каждой банкѣ рисунокъ „ИСТОЧНИКЪ КРАСОТЫ“. Безъ подписи Cazimi и рисунка, утвержденнаго Департаментомъ Торговъ и Мануфактур. за № 4683—
ПОДДѢЛКА.
Продается во всѣхъ аптекарс. парфюм. магаз. и аптекахъ.

(ամ. 2 ան. 11 և 22) 3—6

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է հիւանդներ հանքային ջրերի Կիսլօվօդսկ հիւրանոց Ռօսսիա № 14. վեներական և մորթու հիւանդութիւններ: Гостиница Россія № 14. 19—20

„Գուտտենբերգ“
գրավաճառանոցում վաճառվում են

Եկմալեան Մ. Երգեցողութիւնք սրբոյ պատարագի, փոխադրեալ ի խառն երգեցիկ կանս և ներդաշնակեալ, 8 ր.:
Եկմալեան Մ. Ներդաշնակեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի, իգական բարձր ձայն, 1 ր. 50 կ.:
Եկմալեան Մ. Ներդաշնակեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի, իգական խոնարհ ձայն, 1 ր. 50 կ.:
Եկմալեան Մ. Ներդաշնակեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի, արական խոնարհ ձայն, 2 ր.:
Եկմալեան Մ. Ներդաշնակեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի, արական բարձր ձայն, 2 ր.:

Դիմել.—Тифлисъ, Книжный магазинъ «Гутенбергъ» Г. И. Галустяну. 2—3

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5